6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 156 (4774)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Ե՞րբ է գալու հայերենին Ջավախքում կարգավիճակ տալու ժամանակը

Ամերիկյան դիվանագիտությունը անհրաժեշտություն է տեսնում Վրաստանում փոքրամասնությունների առնչությամբ վստահության ամրապնդման առումով, ընդ որում, այդ խնդիրը թողնելով լուծելու հենց վրացական կառավարությանը:

Ինչպես տեղեկացնում է Հայրենադարձության եւ հիմնավորման հասարակական կազմակերպությունների «Երկիր» միությունը, «WikiLeaks»-ի ԱՄՆ դիվանագիտական փաստաթղթերից մի քանիսը տեղեկություններ են պարունակում վրացահայության եւ ջավախահայության խնդիրների եւ դրանք լուծելու ուղղությամբ Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչների կողմից առաջ քաշվող օրինական պահանջների վերաբերյալ:

Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հետ Վրաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Թեֆֆի հանդիպման մանրամասները պարունակող ԱՄՆ դեսպանատան 2009թ. հունիսի 16-ի հաղորդագրության մեջ մասնավորապես ասվում է, որ սրբազանն առանձնացրել է 3 չլուծված խնդիրներ. «Դրանք են՝ հայերենը որպես պաշտոնական լեզու տեղական մակարդակներում օգտագործելու հնարավորությունը, էթնիկ հայերի համար կրթական հնարավորությունների ստեղծումը եւ վիճելի եկեղեցական ունեցվածքի վերադարձը»:

Հաղորդագրության մեջ նշվում է, որ Վազգեն եպս. Միրզախանյանը առաջարկել է Ախալքալաքում ստեղծել համատեղ հայ-վրացական համալսարան, ինչը կբարձրացնի վրացերենի իմացությունը տարածաշրջանում եւ որակյալ կրթության ապահովման միջոցով կօգնի հայերին լինել ավելի մրցունակ Վրաստանի տնտեսության մեջ միջին եւ բարձր մակարդակի աշխատատեղեր զբաղեցնելու համար: ԱՄՆ դեսպանը խոստացել է բարձրացնել նշված խնդիրները վերաինտեգրման նախարար Թեմուր Յակոբաշվիլու մոտ:

2009թ. սեպտեմբերի 29-ով թվագրված մեկ այլ հաղորդագրության մեջ ասվում է, թե Սամցխե - Ջավախքի, Ախալցխայի եւ Ախալքալաքի քաղաքային իշխանության ներկայացուցիչները եւ ՀԿ-ները լավատեսորեն են տրամադրված եղել Վրաստանում իրենց ապագայի հանդեպ, սակայն անհանգստացած են իրենց մշակութային եւ լեզվական ժառանգության պաշտպանության կապակցությամբ: «Վրաստանի 300000 հայ բնակչության գերակշիռ մասը ապրում է երկրի հարավկենտրոնական մասում տեղակայված այս երկու շրջաններում: ... Սամցխե-Ջավախքի հայ համայնքի ինտեգրմանն ուղղված ջանքերում լեզուն մնում է կարեւորագույն խոչընդոտը», նշված է դիվանագիտական հաղորդագրությունում:

Ըստ այդմ, հայ համայնքը շարունակում է հայերենը որպես տարածաշրջանային լեզու ճանաչելու, եկեղեցու ունեցվածքի խնդիրների լուծման եւ տեղական ինքնակառավարման մակարդակի բարձրացման կոչեր հնչեցնել:

Հաղորդագրության «Ինչպես կառավարությունը կարող է ամրապնդել վստահությունը» բաժնում էլ ասվում է, որ ջավախքցի գրուցակիցներն ամենից առաջ նշում են հայերենը որպես տարածաշրջանային լեզու ճանաչելու հարցը: «Դե յուրե միայն վրացերենը կարող է օգտագործվել տեղական ինքնակառավարման մեջ եւ դպրոցներում. դե ֆակտո հայերենն ու ռուսերենն են օգտագործվում: (2009թ.) սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Սարգսյանը հայտարարեց, որ Վրաստանը պետք է ճանաչի հայերենը որպես տարածաշրջանային լեզու «ինտեգրում առանց ձուլման» սկզբունքի հիման վրա»:

Որպես երկրորդ խնդիր է ներկայացվում Հայ եւ Վրաց ուղղափառ եկեղեցիների կողմից վիճարկվող եկեղեցական կառույցներին վերաբերող ունեցվածքային հարցերի լուծումը: «Աղգոմելաձեն (ԱՄՆ դեսպանության ներկայացուցչի կողմից հարցված փորձագետներից մեկը) ասաց, որ խնդիրը «նման է հրաբխի՝ չգիտես, թե ե՛րբ է ժայթքելու», նշված է հաղորդագրության մեջ:

«Հարցերից երրորդն էլ առավել լայն տեղական ինքնակառավարման պահանջն է: Մարդիկ բողոքում են, որ ստիպված են սպասել Թբիլիսիից պաշտոնյաների գալուն կամ ստիպված են ինքնուրույն մեկնել Թբիլիսի՝ ծախսելով մեծ գումարներ, որպեսզի լուծում տան տարրական վարչական գործերին, ինչպիսիք են անձնագրի ստացումը կամ իրենց գույքի գրանցումը»:

Վրաստանի հայերի առաջ քաշած երեք հիմնական հարցերից մեկի՝ եկեղեցական ունեցվածքի առնչությամբ ինչ-ինչ գործընթացներ նոր սկսում են տեղի ունենալ, եթե որպես ունեցվածքի հարցը լուծելու ճանապարհ դիտարկենք Վրաստանում կրոնական համայնքներին կարգավիճակ տրամադրելու մասին Վրաստանի քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները: Ինչ վերաբերում է էթնիկ հայերի համար կրթական հնարավորությունների ստեղծմանը, ապա այդ ուղղությամբ էլ դեռեւս երկու տարի առաջ է Վրաստանի նախագահն առաջընթաց քայլ արել՝ էթնիկ փոքրամասնություններին հնարավորություն տալով որոշակի արտոնություններով ու վրացերեն սովորելու առանձին հնարավորությամբ ընդունվելու վրացական բուհեր:

Փաստացի ոչ մի քայլ դեռեւս չի արվել հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տալու ուղղությամբ, այսինքն՝ կարելի է հուսալ, որ մոտակա շրջանում ամերիկյան՝ ժողովրդավարությունն ամբողջական դարձնելու կոչերի ներքո վրացական կառավարությունը կարող է խիզախել ու անցնել նաեւ լեզվական հարցերի լուծմանը, ընդ որում, ոչ միայն Ջավախքում հայերենի, այլեւ Քվեմո Քարթլիում ադրբեջաներենի առումով:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Զինդատախազը խոստանում է՝ զինվորի մահվան բոլոր մեղավորները պատասխանատվության են ենթարկվելու

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԼՂՀ «Եղնիկներ» կոչվող զորամասում 8 ամիս ծառայած Աղասի Աբրահամյանի դին գտել էին օգոստոսի 26-ին: Զինծառայողի մահը լայն արձագանք գտավ մամուլում եւ սոցիալական ցանցերում: Նախորդ հինգշաբթի կառավարության շենքի դիմաց տեղի ունեցավ բողոքի ակցիա, որտեղ հավաքվածները պահանջում էին գտնել եւ պատժել Աբրահամյանին սպանած սպային: Իրավապահ մարմինների նախաքննությամբ պարզ էր դարձել, որ 18-ամյա ժամկետային զինծառայողին դաժանորեն ծեծել եւ բռնության էին ենթարկել:

Երեկ զինվորական դատախազ **Գեւորգ Կոստանյանը** ներկայացրեց զորամասում տեղի ունեցած դեպքերի հաջորդականությունը: Նրա փոխանցմամբ՝ եղել է ծեծի ու բռնության էպիզոդ գումարտակում. ըստ նախաքննությամբ ձեռք բերված տվյալների, Աբրահամյանն իրեն վատ է զգացել, հետո կորցրել է գիտակցությունն ու վայր ընկել: Որոշ ժամանակ անց նրան տեղափոխել են զորամասի բուժկետ, որը գումարտակից 30 կիլոմետր է հեռու: Բուժկետում, բացարձակ անօգնական վիճակում Աբրահամյանը մնացել է 10 ժամ: Բացի դրանից՝ բուժկետի պետը բռնություն է կիրառել: Դեպքերի հաջորդականությունը տարել է նրան, որ զինծառայողը տեղափոխվել է հոսպիտալ եւ այնտեղ մահացել:

Սակայն նախկին զինծառայողի ծնողներին զորամասից բոլորովին այլ բան են տեղեկացրել: Իբր տղան թունավորվել է, այնուհետեւ նրան տեղափոխել են հիվանդանոց, հետո նա վայր է ընկել մահճակալից եւ մահացել:

Կոստանյանի մեկնաբանությամբ՝ ի սկզբանե ներկայացված բոլոր վարկածները քննարկման առարկա չեն դարձել, որովհետեւ Աբրահամյանի մարմնի վրա ակնհայտ բռնության հետքեր են եղել: *Տես էջ 2*

# ՀԱՊԿ-ն կդառնա ավելի մարտունա՞կ

ԱՊՀ գագաթաժողովը Դուշանբեում, ըստ «Կոմերսանտ» թերթի, ցույց տվեց, որ «Մոսկվայի համար այդ կառույցն այլեւս առաջնային չէ», քանի որ շեշտադրումն արվում է Մաքսային միության ու Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի կազմակերպության վրա, որոնց, ըստ թերթի, լուրջ փոփոխություններ են սպասվում: Նույն աղբյուրի պնդմամբ, փաստաթղթերն այդ ուղղությամբ արդեն համաձայնեցվում են, ընդ որում, Մաքսային միության դեպքում «նորարարությունները բացառվում են Ուկրաինային էլ ներառելու հաշվարկներով, իսկ ՀԱՊԿ պարագայում փորձում են դառնալ առավել մարտունակ՝ անգամ կազմակերպության անդամներից մեկի կորստի գնով»:

ՀԱՊԿ պարագայում, ինչպես տեղեկացրել են թերթի դիվանագիտական աղբյուրները, խոսքը «յոթնյակի» (Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան, Տաջիկստան, Ուզբեկստան) արդյունավետության բարձրացման, նաեւ նորմատիվ բազայի, որոշումների կայացման հնարավորության ու ՀԱՊԿ ներուժի օգտագործման մասին է: ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան էլ թերթին տեղեկացրել է, որ խնդիր է դրված սահմանել, թե որ որոշումներն են այդուհետեւ ընդունվելու կոնսենսուսով, որոնք՝ որակական մեծամասնությամբ:

Այս փոփոխությունները, ըստ ՌԴ ԱԳՆ աղբյուրների, կարող են բերել կազմակերպության անդամների թվի կրճատմանը առնվազն մեկով: Նախ, պատրաստվում են Հավաքական անվտանգության պայմանագրի փոփոխություններ՝ հրաժարվելու կոնսենսուսով բոլոր որոշումները կայացնելու պրակտիկայից: Այս մոտեցմանը դեմ է Ուզբեկստանը, որն էլ կարող է հիմք դառնալ կազմակերպությունից Ուզբեկստանին դուրս թողնելու համար:

Ինչ վերաբերում է Մաքսային միությանը, ապա այս կառույցի շրջանակներում կատարելիք փոփոխությունները ամենից առաջ նպատակ ունեն ներգրավելու Ուկրաինային այս միության մեջ, որում արդեն ընդգրկված են Ռուսաստանը, Բելառուսն ու Ղազախստանը: **Ա. Հ.**



# Հավերժ երիտասարդ Շառլ Ազնավուր



**Շառլ Ազնավուրն արժանացել է «Հավերժ երիտասարդության» մրցանակի: Ինչպես հայտնում է ֆրանսիական «Le Mond»-ը, մրցանակը երաժշտին հանձնվել է օգոստոսի 28-ին Ֆրանսիայում կայացած «Գրքերի անտառ» փառատոնի ժամանակ:**

# Բուշեհրի ԱԷԿ-ը գործարկվել է

Իրանի առաջին ատոմակայանը՝ Բուշեհրի ԱԷԿ-ը, սկսել է էլեկտրաէներգիա մատակարարել սպառողներին: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը՝ վկայակոչելով ISNA-ի հաղորդումը:

Վերջինիս տվյալներով, ատոմակայանը ազգային էլեկտրացանցին միացվել է սեպտեմբերի լույս 4-ի գիշերը: Ներկայումս ԱԷԿ-ի հզորությունը հասցված է 60 մեգավատտի: Կայանի աշխատակիցներից մեկի խոսքերով՝ ԱԷԿ-ի հզորությունը հասցվելու է 1000 մեգավատտի:

Ինտերֆաքս գործակալությունը հաղորդում է, որ Բուշեհրի ատոմակայանի գործարկման պաշտոնական արարողությունը տեղի կունենա սեպտեմբերի 12-ին: Մինչ այդ մասնագետները կավարտեն բոլոր անհրաժեշտ ստուգումները:

Իրանական ԱԷԿ-ի շինարարության պատասխանատու ռուսական «Ատոմստրոյէքսպորտը» օգոստոսի վերջերին հայտարարել էր, որ կայանի հզորությունը հասցված է նախատեսվածի 40 տոկոսին:



Բուշեհրի ԱԷԿ-ի նախնական բացումը տեղի էր ունեցել 2010-ի օգոստոսի 21-ին: Սկսվել էր վառելիքի բեռնումը, սակայն 2010-ին ԱԷԿ-ը այդպես էլ չէր հասել աշխատանքային հզորության: Ֆինանսավորման ընդհատումների պատճառով գործարկումը քանիցս հետաձգվել էր. նախապես որոշված էր կայանը ցանցին միացնել 2007-ին:

# Ճանաչել, նշանակում է տեր լինել

Օգոստոսի 20-26-ը Ալավերդցի 20 երիտասարդներից բաղկացած խումբը մասնակցեց Արեւմտյան Հայաստանի տարածքներ ուխտագնացությանը: Նախաձեռնությունը «Վալլեքս» խմբի «Բեյզ Մեթըլս» ընկերությանը եւ Ալավերդու քաղաքապետարանինն էր, կազմակերպիչը` «Անիտուր» կազմակերպությունը, մասնակիցները` Ալավերդցի ուսանողներ, ովքեր աչքի են ընկնել ուսման բարձր առաջադիմությամբ եւ հասարակական գործունեությամբ: Սա նման առաջին նախաձեռնությունը չէ: Ընկերությունը հաճախ է տարբեր տեսակի շրջագայություններ կազմակերպում` նպատակ հետապնդելով հասարակությանը ծանոթացնել ընկերության գործունեությանն ու որդեգրած արժեքներին, ապահովել սեփական գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողություն, սոցիալական կամուրջներ ստեղծել այն համայնքների միջեւ, որտեղ գործում են «Վալլեքս» խմբի ընկերությունները:

«Տարբեր շրջայցեր են կազմակերպվել Ալավերդի, Թեղուտ, ԼՂՀ: «Վալլեքս» խմբի «Բեյզ Մեթըլս» ընկերության հրավերով Ալավերդու քաղաքային ավագանին եւ երիտասարդական ակտիվի ներկայացուցիչները վերջերս այցելել էին «Վալլեքս» խմբի ընկերությունների ԼՂՀ-ում գտնվող ձեռնարկություններ: «Բեյզ Մեթըլս» ընկերության հյուրընկալությունը, սակայն, չսահմանափակվեց արտադրական գործունեության օբյեկտներ շրջայցերով, կազմակերպվեցին այցելություններ Արցախի պատմամշակութային հուշարձաններ: Ալավերդցի երիտասարդների համար Արեւմտյան Հայաստանի պատմամշակութային հուշարձաններ-ուխտավայրեր շրջագայություն կազմակերպելու գաղափարը ծագեց որպես Լոռու մարզ-Արցախ համագործակցության եւ բարեկամության կամուրջների ստեղծման տրամաբանական շարունակություն», «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց «Վալլեքս» խմբի ընկերությունների մամլո խոսնակ **Վահրամ Ավագյանը**:




Ուխտագնացներն այցելել են Կարս, Անի, Բիթլիս, Բայազետ, Վան, փորձարի պարել Արարատի արեւմտյան լանջերին, աղոթել հայկական դեռեւս կանգուն եկեղեցիներում: «Մի բան է թերթում կարդալ, որ Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին վերածվել է մզկիթի, մեկ այլ բան` տեղում լինելով հայկական եկեղեցու շեմից լսել նամազի ձայնը: Ուխտագնացության մասնակիցները դժվարանում էին միանշանակ ձեւակերպումներով արտահայտել, թե ինչ է տեղի ունենում այդ պահին իրենց ներաշխարհում», ասում է Վահրամ Ավագյանը` հավելելով, որ նման ուխտագնացությունները նպաստում են, որ երիտասարդ սերունդն առավել լավ ճանաչի եւ համարժեք գնահատի սեփական պատմությունը, լինի առավել միասնական:

Ուխտագնացության մասնակիցները մշակութային հնչեղություն ունեցող հետաքրքրական իրադարձության ներկա են դարձել Աղթամար կղզում: Ալավերդու հոգեւոր հովիվ Միքայել քահանա Շաղոյանի օրհնությամբ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում կատարվել է հայ երիտասարդ զույգի պսակադրություն: Սակայն եկեղեցու պահպանության աշխատակիցներն արգելել են շարունակել պսակադրության արարողությունը` վկայակոչելով թուրքական օրենսդրությունը: «Պսակադրությունն ավարտվեց եկեղեցու հարակից մասնաշենքի ավերակների մոտ, սակայն, մեր ցավով, դրանից արարողության խորհուրդը չխամրեց», ասաց Ավագյանը:

«Այս ուխտագնացության հիմնական նպատակը ճանաչողական էր: Մշակութային ժառանգության իրական տերը դառնալու հարցում` ճանաչողությունն առաջին եւ կարեւորագույն քայլն է: Եթե այսօր երիտասարդները ճանաչեցին իրենց պատմական հայրենիքը, իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ, ապա մեկ քայլով մոտեցան դրա իրական տերը լինելուն: Մշակութային ժառանգությունը ճանաչելով` նույնիսկ սեփականաշիրոջ իրավական կարգավիճակ չունենալու դեպքում մարդը կարող է ավելի լիարժեք տեր զգալ իրեն, քան նա, ով այդպիսի կարգավիճակ ունի, սակայն չի ճանաչում»:

Անին, որի հայոց մայրաքաղաք հռչակվելու 1050-ամյակը լրանում է այս տարի, ուխտագնացության եզրափակիչ նպատակակետն էր: Ուխտագնացներն իրենց աղոթքն առ Աստված ուղղեցին Անիի Մայր տաճարում, որտեղ կազմակերպվեց նաեւ ուխտագնացության ամփոփիչ միջոցառումը, եւ երիտասարդ ուխտավորներին «Վալլեքս» խմբի անունից հանձնվեցին մասնակցության հավաստագրեր:

Հ. Հ.

# 1000-դրամանոց օրագրի բիզնես դպրոցներում

Այս տարի հանրապետության բոլոր միջնակարգ դպրոցների առաջին դասարանցիներին անվճար տրամադրվելու է օրագիր` նվիրված ՀՀ անկախության 20-ամյա հոբելյանին: Այս տեղեկությունից հետո բազմաթիվ ծնողներ սեպտեմբերմեկյան գնումների ցուցակից ջնջել են «օրագիր» բառը:

Սակայն սեպտեմբերի 2-ին ծնողներին տեղեկացրել են, որ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է 1000 դրամ գումար տա` դպրոցի օրագրերը գնելու համար: Ծնողների վրդովմունքին` այս տարի օրագրերը պետք է պետությունը տրամադրի, բացատրել են, որ դա կարող եք պահել, իսկ դպրոցի 1000-դրամանոց օրագրով պետք է երեխաները գան դասի: Նման դեպք մասնավորապես գրանցվել է Երեւանի թիվ 11 դպրոցում: Երեկ վերոնշյալ դպրոց հաճախող աշակերտների մի քանի ծնողներ զանգահարել էին «**Ազգ**»-ի խմբագրություն: Նրանց փոխանցմամբ` դպրոցի տնօրենը պարտադրել է, որ բոլոր աշակերտները օրագիր գնեն:

«Սա առաջին տարին չէ: Խանութում օրագիրը վաճառվում է 500 դրամով, իսկ մեզ վաճառում են 1000 դրամով: Երբ զանգահարեցի կրթության եւ գիտության նախարարության թեժ գիծ, սկսեցին հարցաքննել, թե ո՞վ եմ, ի՞նչ եմ անում, ո՞ր դասարանում է սովորում երեխաս: Իսկ դա ի՞նչ կապ ունի, ես զանգահարել եմ թեժ գիծ, որպեսզի դուք իմանաք, թե ինչ է կատարվում դպրոցում: Ծնողներին ստիպում են օրագրեր գնել: Իմ անունը ճշտելու փոխարեն դուք պետք է մարդ ուղարկեք եւ պարզեք, թե ինչ է կատարվում», ասել է ծնողը: Սակայն, ի պատասխան, թեժ գծից ասել են. «Հո ավտոմատը չեն դրել վզիդ ու գումար ուզում», եւ կախել են լսափողը:

«Սա նվաստացուցիչ է, վիրավորական է, երբ դպրոցներում նման մակարդակի մարդիկ են աշխատում: Այդ 1000 դրամները գնում են ինչ-որ մեկի գրպանը: Հաշվե՛ք, թե դպրոցում քանի աշակերտ է սովորում: Յուրաքանչյուրը պետք է վճարի 1000 դրամ: Կստացվի ահռելի գումար, որ ոչ պետության բյուջե է գնում, ոչ էլ դպրոցի», ասացին ծնողները:

Մի քանի օր առաջ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը հեռուստաընկերություններից մեկին տված հարցազրույցում հայտարարեց, որ աշխատանքային տետրեր գնելը պարտադիր չէ: Երեկ ծնողները այլ բան ասացին: Դասի ժամանակ ներս է մտնում տնօրենությունից որեւէ մեկն ու երեխաներին բաժանում աշխատանքային տետրեր: «Իմ երեխային 16 աշխատանքային տետր են բաժանել: Նրանցից յուրաքանչյուրն արժե 450 դրամ: Սակայն այդ աշխատանքային տետրերով նրանք չեն աշխատում: Հիմնականում սովորական տետրերով են աշխատում: Անցյալ տարի էլ գնեցինք, բայց երկու էջ գրեցին ու վերջ: Սա ուղղակի բիզնեսի նոր ձեւ է», ասաց ծնողներից մեկը:

Ընդհանրապես կամավորության սկզբունքով աշխատանքային տետր գնելը, ինչպես ասում է նախարարը, պետք է վերանա: Հույս ունենք, նախարարությունից կարձագանքեն այս հրապարակմանը, նախաքննություն կանցկացվի եւ բիզնես ծավալող տնօրենները կպատժվեն:

Հ. Հ.

ԱՅՍՊԻՍԻ ԲԺԻՇԿՆԵՐ ԷԼ ԿԱՆ

# Նորածինը մահացավ մանկաբարձի անփութության պատճառով

**Օգոստոսի 14-ին Վայքի ծննդատանը ծնված մանչուկին պատշաճ բուժօգնություն չեն ցուցաբերել: Հիվանդանոցի բժիշկները պատճառաբանել են, թե համապատասխան սարքավորումներ, այդ թվում նաեւ թթվածնի բալոն անգամ չեն ունեցել նորածնին օգնելու համար: Իսկ մինչ այդ, Վայքի ծննդատան բաժանմունքի վարիչ Մետաքսյա Հովհաննիսյանն իր աշխատողներին կարգադրել է ու տվել ցուցում, որ ծննդկան մորը` Գնդեվազ գյուղի 20-ամյա բժշկուհուն, սրսկեն դիմեդրոլ եւ անալգին, մինչեւ ինքը` 54-ամյա մանկաբարձ-գինեկոլոգ Մետաքսյան, բուրդը չբխի, վերմակը կարի ու նոր ժամանի: Մասնագետները պնդում են, որ երկունքի ցավերի մեջ գտնվող ծննդկանին երբեք չի կարելի ցավազրկող դեղորայք ներարկել, որովհետեւ դրանք կանխում են կծկումների հաճախականությունը, որն էլ կարող է շատ բարդություններ առաջացնել:**

**Հենց այդպիսի բարդություններ է առաջացել երիտասարդ ծննդկանի ու նորածնի մոտ: Հիվանդանոցում տեսնելով, որ այլեւս չեն կարող համապատասխան բուժօգնություն ցուցաբերել, հարազատները դիմել են առողջապահության նախարարություն: Առողջապահության նախարար Հարություն Քուշկյանի հանձնարարությամբ ստեղծվել է հանձնաժողով` խնդիրը ուսումնասիրելու եւ դեպքի հանգամանքները պարզելու նպատակով: Նորածնին ծնվելուց հետո մի քանի ժամ անց տեղափոխել են Երեւանի «Մուրացան» ԲԿ: Հիվանդանոց են գնացել նախարարության մոր եւ մանկան առողջության պահպանման վարչության պետ Կարինե Սարիբեկյանը, մայրության եւ վերարտադրողական առողջության բաժնի պետ Գրիգոր Ավագյանը, տեղում իրավիճակը գնահատելու եւ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու համար: Չնայած ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցառումները նորածնի բուժօգնությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար, մանչուկի կյանքը փրկել չհաջողվեց:**

**Ներկայումս Վայոց ձորում է առողջապահության նախարարության որակի կառավարման բաժնի պետ Կարեն Ավագյանը, դեպքի մանրամասներին տեղեկանալու եւ համապատասխան տեղեկություն հավաքելու նպատակով: Հատուկ հանձնաժողովի վերջնական եզրակացությունը կհրապարակվի շուտով, իսկ այժմ պարզ է, որ երեխան ծնվել է պորտալարը 3 անգամ փաթաթված:**

**Ոստիկանության Վայոց ձորի քննչական բաժնում նախապատրաստվել են նյութեր 54-ամյա Մետաքսյան Հովհաննիսյանի մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ եւ ճիշտ կատարելու առնչությամբ, որն էլ ազդել է նորածնի առողջական վիճակի վրա, պատճառել մահ: Բժշկուհու գործունեությունը ներկայումս կասեցվել է առողջապահության նախարարության որոշմամբ: Իսկ թե ինչ պատիժ է սպասում Հիպոկրատի երդումը խախտող եւ ծննդկանին թողած` իր բուրդը չբխող մանկաբարձ-գինեկոլոգին, կորոշեն իրավապահները: Հետաքրքրական է, թե Մետաքսյան տարին քանի անգամ է բուրդ ձաղկում եւ քանի-քանիսին է դժբախտացրել: Հիմա եկավ ժամանակը, որ վայ բժշկուհու «բուրդը չբխեն», որ դաս լինի:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Զինդատախազը խոստանում է, որ զինվորի մահվան...

*1-ին էջից*

Զինդատախազի հավաստիացմամբ` նախաքննական մարմինը կաշկանդված չէ: «Եղնիկների» գործով մեղադրվող սպան` բուժկետի բժիշկը, ձերբակալվել եւ կալանավորվել է: Նրան մեղադրանք է առաջադրվել իշխանության չարաշահման, իշխանազանցության կամ անգործության հատկանիշներով հանցագործություն կատարելու համար: Իրավապահ մարմինները սպայի անունը չեն հայտնում: Կոստանյանը դա բացատրում է այն հանգամանքով, որ եթե նման աղմկահարույց հանցագործության պարագայում հայտարարեն անձի անունը, ապա չեն կարող երաշխավորել նրա անվտանգությունը:

Կոստանյանը վստահեցնում է, որ բոլորը մեղավորները պատժվելու են:

«Մեր անունից կարող եմ երաշխավորել, որ յուրաքանչյուր անձ, ով մասնակից է եղել, ենթարկվելու է պատասխանատվության` անկախ իր կոչումից, պաշտոնից, դիրքից»:

Զինդատախազն ասաց, որ «Սպանություն» հոդվածով դեռեւս ոչ մի մեղադրանք չի առաջադրվել: Բժշկական հանձնաժողովային փորձաքննության եզրակացությունը` մահվան պատճառի վերաբերյալ, սպասվում է երկու օրից:

ՊՆ քննչական ծառայության պետ **Արմեն Հարությունյանն** էլ ասաց, որ ներկայումս կատարվում են քննչական գործողություններ եւ առերեսումներ: «Հնարավոր է, որ դրանք հիմք հանդիսանան մինչեւ օրվա վերջ եւս երկու անձանց ձերբակալելու, որպես կասկածյալ ներգրավելու համար»:

Հարությունյանի փոխանցմամբ` երեկ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը օպերատիվ խորհրդակցություն է հրավիրել` պարզելու, թե որտեղ եւ որ զինծառայությունը ճիշտ չի կազմակերպած եւ որոնք են այն պատճառներն ու պայմանները, որ կարող էին նման հանցագործության համար պարարտ հող ստեղծել:

Երեկվան ՀՀ ՊՆ քննչական վարչությունից հայտնեցին, որ գործի առնչությամբ կալանավորվել է ժամկետային զինծառայող: Նրան մեղադրանք է առաջադրվել ՔՐ. ՕՐ.-ի 359-րդ հոդվածի առաջին մասով` նախատեսված հանցագործություն կատարելու համար:

Հիշեցնենք, որ սա առաջին աղմկահարույց դեպքը չէ` կապված «Եղնիկներ» զորամասի հետ: Անցյալ տարի youtube-ում հայտնվեց տեսագրություն, թե ինչպես է սպան զինծառայողներին ստորացնում, վիրավորում արժանապատվությունն ու հայհոյում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

# Դիտարկումներ

## Որտե՞ղ է թշնամին

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

Երբ Ալեքսանդր Մեծը, որն այդ ժամանակ դեռ մեծ չէր, գահը ժառանգեց իր հորից՝ Փիլիպոս 2-րդ Մակեդոնացուց, առաջին գործը, որ կատարեց, իր ամբողջ հարստությունը ժողովրդին բաժանելն էր: Երբ նրան հարցրեցին, թե այդ մեծահոգությունից հետո իրեն ինչ մնաց, նա շատ կարճ, մի բառով պատասխանեց՝ հույսը: Եվ այդ հույսը բավականաչափ հեռատեսություն եւ ուժ տվեց նրան, որ նվաճի Հին աշխարհը:

Տեղափոխվելով մեր օրերը, տեսնենք, թե ինչ վիճակում էր Հայաստանը, երբ անկախություն ձեռք բերեց քսան տարի առաջ: Ոչ էլեկտրականություն կար, ոչ ջուր, ոչ հաց եւ ոչ էլ ջեռուցում: Բայց ժողովուրդը մեծ ակնկալիքներ ուներ, որովհետեւ հույս կար, եւ այդ հույսն էր, որ խթան հանդիսացավ թշնամուն պարտության մատնելու ղարաբաղյան պատերազմում եւ ազատագրելու Շուշին:

Այսօր իրավիճակը գրեթե հակառակն է: Ամբողջ երկիրն օրական 24 ժամ ողողված է էլեկտրականությամբ, միայն մի քանի գյուղական վայրերն են բողոքում ջրի սակավությունից, հացն ու այլ ուտելիքները առատ են, եթե, անշուշտ, փող ունես գնելու, եւ Երեւանը դարձել է աշխույժ, եռուզեռուն մի քաղաք իր սրճարաններով, գիշերային ակումբներով եւ կազինոներով: Բայց մարդիկ հեռանում են եւ այն էլ մեծ թվերով: Ինչո՞ւ: Որովհետեւ հույսը կորել է:

Համարյա զավեշտական է թվում, որ մարդիկ կամովին ու պատրաստակամությամբ դժվարությունները հաղթահարելով ու կառչած մնալով երկրին, հողին, այսօր հարաբերական հանգստության եւ դյուրահարմարությունների պայմաններում լքում են հայրենիքը, որ դարեր շարունակ երազել ենք ունենալ:

Եթե համարձակվենք հարցնել արտագաղթողներին, թե ինչու են որոշել հեռանալ Հայաստանից, նրանք ցինիկաբար պատասխանում են. «Այսքան տարի մենք տանջվեցինք՝ պահպանելու հայրենիքը, հիմա ձեր հերթն է, եկեք ու շենացրեք»:

Արժեքների ամբողջ համակարգը շուռ է եկել: Խորհրդային ժամանակներում մարդկանց պատժելու համար Սիբիր էին ուղարկում: Այսօր ռուսական կառավարությունը հրավիրում է հայերին որպես պարգեւ հաստատվելու Սիբիրում, ստանալու բնակարան, աշխատանք եւ քաղաքացիություն:

Եղեռնի օրերին պատվավոր հայ կանայք ինքնակամ Եփրատ գետն էին նետվում՝ խեղդամահ լինելու, նման վախճանը գերադասելով թուրքերի կողմից բռնաբարության ենթարկվելուց: Այսօր երիտասարդ կանայք անցնում են այդ նույն գետը՝ Թուրքիայում մարմնավաճառությամբ զբաղվելու համար:

Վերջերս պրոֆ. Ժիրայր Լիպարիտյանը մամուլի էջերում խորաթափանց մի հոդված ստորագրեց՝ ահազանգ հնչեցնելով Հայաստանում բնակչության թվի շարունակվող նվազման վերաբերյալ: Այն վերնագրված էր «Կոչ. ճգնաժամային պահ Հայոց պատմության մեջ»: Ոչ մեկի համար գաղտնիք չէ Լիպարիտյանի դիրքորոշումը իշխանություն-ընդդիմություն բլոկներում: Հուսով ենք, որ նրա կոչը այդ կոնտեքստում չի դիտարկվի, որովհետեւ նրա ձայնը պատմության խորքերից է հնչում: Նրա տեսակետն այն է, որ հայերը կարող են դիմակայել ամեն դժվարության՝ բռնություն, ցեղասպանություն, երկրաշարժ, պատերազմ եւ այլ տեսակի աղետ, բայց չեն կարող գոյատեւել հայրենիքի բնակչության դատարկումից հետո:

Հոդվածում մեջբերված նախադեպերը դառն են, բայց դիպուկ: Բագրատունյաց թագավորության անկումը, նշում է նա, արագ ընթացք ստացավ, երբ Արծրունիները անջատողական սուր հակումներ դրսեւորեցին Աղթամարում՝ պատճառ դառնալով այդ ժամանակվա Հայաստանի բնակչության նվազմանը: Նաեւ նա պնդում է, որ ցեղասպանությունը երիտթուրքերի համար հնարավոր եղավ իրագործել այն ժամանակ, երբ հայ բնակչությունը փոքրամասնության էր վերածվել պատմական Հայաստանի նահանգներում: Մինչդեռ ինքնապաշտպանական պատերազմները հաջող ելք ունեցան Վասպուրականում, որովհետեւ հայերն այդ տարածքում մեծամասնություն էին կազմում Առաջին համաշխարհային օրերին:

Այսօր ուղեղների արտահոսքի եւ բնակչության թվի նվազման հետեւանքով Հայաստանը հայտնվել է ճգնաժամային մի իրավիճակում, որը դժվարացնելու է երկրի կառավարության պահպանումը եւ սահմանների պաշտպանությունը:

Այդ աղետաբեր իրավիճակն անշուշտ ունի իր օբյեկտիվ պատճառները: Թուրքիան եւ Ադրբեջանը շարունակում են իրենց ցեղասպանական քաղաքականությունը բոլորովին տարբեր ձեւով՝ շրջափակման միջոցով տնտեսական խեղդամահություն պարտադրելով մեր երկրին: Վրաստանը ոչ պակաս թշնամական կեցվածք է որդեգրել: Վերջերս Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին բացեիբաց հայտարարեց. «Ադրբեջանի թշնամին նաեւ մեր թշնամին է»: Կասկածից վեր է, որ նա նկատի ուներ Հայաստանը:

Սրանք մեր արտաքին թշնամիներն են, որոնք իրենց ազգային շահերից ելնելով գուցե այլ կերպ չեն կարող վարվել: Բայց մենք ունենք, դժբախտաբար, նաեւ ներքին թշնամիներ, որոնք շատ ավելի վնասաբեր են: Դրանք այն նույն մարդիկ են, որոնք ստեղծել են օլիգարխների արտոնյալ մի դասակարգ՝ նպատակ ունենալով իրենց անձնական շահերի համար խոչընդոտելու ուրիշների մուտքը տնտեսական բնագավառ:

Երբ պետական պաշտոնյաներ եւ նույնիսկ մի նախարար հափշտակեցին երկրաշարժից տուժած չքավոր մարդկանց համար Հայաստան ուղարկված օգնությունը, բոլորս սարսափել էինք այլասերման ծայրաստիճանից, որին հասել էր հայի բնավորությունը խորհրդային երկար տարիների իշխանության հետեւանքով:

Բայց միեւնույն միտումը շարունակվում է նաեւ այսօր: Վերջերս սփյուռքահայ գործարար եւ բարերար Վահագն Հովնանյանը մի քանի օրինակներ նշեց հարցազրույցի ժամանակ, ասելով, որ երբ ցանկացել է ներգրավվել ցորենի մշակման գործունեության մեջ, սպառնալիքներ է ստացել, որ իր արտերը հրո ճարակ կդառնան նախքան բերք տալը: Եվ սա այն դեպքում, երբ Հայաստանը ցորեն ներմուծող երկիր է: Ապա փորձել է Ռուսաստանից փայտանյութ ներկրել, բայց ռուս գործընկերները մերժել են գործ ունենալ իր հետ, որովհետեւ փայտանյութ ներկրելը որոշ օլիգարխների մենաշնորհ է: Նա նույնիսկ քաջալերել է մի քանի սփյուռքահայերի՝ գործունեություն ծավալել հայրենիքում, բայց կառավարական «ապարատչիկները» խրտնեցրել են նրանց:

Որեւէ հայ, որ ինչ-որ չափով գործունեություն է ծավալել հայրենիքում, կարող է առնվազն հինգ նման դեպքերի մասին վկայել:

Որեւէ օտար ներդնող ռիսկի առաջ է կանգնած: Գործարար շրջանակներում ներգրավված մի քանի օտարազգի ներդնողների մարմիններն են հայտնաբերված Հայաստանում, որոնց մասին, նույնիսկ ոստիկանական հետաքննություններից առաջ, մամուլում հայտնվել են հրապարակումներ, որտեղ նշված է եղել, թե այդ մարդիկ այլեւս չեն կարողացել պաշտպանել իրենց:

Միեւնույն թշնամական քաղաքականությունը կիրառվում է նաեւ տեղական բնակչության դեմ: Ներկայումս մեծ դժգոհություն է առաջացրել փողոցային առեւտրի կրպակները ապամոնտաժելու Երեւանի քաղաքապետի որոշումը: Չմոռանանք, որ այդ մարդիկ մեծ գումարներ են վճարել ժամանակին որպես կաշառք՝ քաղաքապետարանի պաշտոնյաներից իրենց խեղճուկ-րուկ կրպակները կառուցելու անօրինական թույլտվություն ստանալու համար: Փոխանակ կոռումպացված պետական պաշտոնյաներին հետապնդելու՝ քաղաքապետը հալածում է կրպակատերերին: Ճիշտ է, գուցե լավ նպատակով: Ո՞վ չի ուզում Երեւանը գեղեցիկ ու բարեկարգ տեսնել: Սակայն, դրանից առաջ պետք է լուծվեր այն հարցը, թե ով է կերակրելու այդ մարդկանց ընտանիքները:

Մինչ օլիգարխներն ապրում են անպարկեշտորեն ձեռք բերված ճոխության մեջ, ժողովրդի մեծամասնությունը ստիպված է կենաց-մահու պայքար մղել, եւ եթե դա երկրի ներսում չի հաջողվում, այդ մարդիկ րոպե անգամ չեն տատանվում իրենց գոյատեւման ապահովությունը որոնել որեւէ այլ երկրում:

Նույնիսկ դեռեւս Հայաստանում ապրողները չեն կարող նպաստել բնակչության աճին, ըստ սոցիոլոգիական որոշ ուսումնասիրությունների՝ ընտանիքների 68.3 տոկոսը չի ցանկանում երեխաներ ունենալ, 16.4 տոկոսը ծրագրում է ունենալ միայն մեկ երեխա, իսկ 13.6 տոկոսը՝ որոշակի պատասխան չունի այդ հարցում: Պատճառների թվում տնտեսականը գրավում է առաջին տեղը:

Մեջբերելով պատմական մի նախադեպ եւս Լիպարիտյանը գրում է. «Մեր թվաքանակը որոշակի սահմանագծից այն աստիճանի էր նվազել, որն անհնար էր դարձրել Օսմանյան կայսրության դեմ ապստամբելը եւ ընդհանուր առմամբ անհույս՝ որեւէ հաջող ինքնապաշտպանողական պայքար մղելը՝ ցեղասպանության դեմ: ... Մոտ մեկ դար անց մենք գուցե մոտենում ենք այդ նույն սահմանագծին Հայաստանի Հանրապետությունում, որտեղ բնակչության թվաքանակի նվազումը, սերտորեն կապակցվելով հարեւանների հետ չկարգավորված խնդիրներին, սպառնալիք է դառնում ինչպես տնտեսության կենսունակությանը, այնպես էլ ազգային պաշտպանությանը»:

Թուրքերը, ազերիները եւ վրացիները Հայաստանի թշնամիներն են եւ ցանկանում են աշխարհի երեսից ջնջել Հայաստան աշխարհը: Հայերը 20 տարի կարողանում են դիմակայել նման ճնշմանը, սպառնալիքին եւ գուցե կարողանան ավելի երկար պայքարել դրա դեմ, բայց ինչպե՞ս վարվել ներքին թշնամու հետ:

Մենք չենք կարող հաջողությամբ դեմ դուրս գալ արտաքին թշնամուն՝ առանց նախ ոչնչացնելու մեր ներքին թշնամուն:

**Դետրոյթ, ԱՄՆ**
**Թարգմ. Հ. Ծ.**

ԳՈՒՅԺ

## Երեւելի պետական գործիչը, դիվանագետը

### *Կյանքից հեռացավ Կամո Ուդումյանը*



**Շաբաթ օրը Մոսկվայում կյանքի 84-րդ տարում վախճանվեց խորհրդային երեւելի դիվանագետ, ԽՍՀՄ արտակարգ ու լիազոր պաշտոնաթող դեսպան Կամո Ուդումյանը: Նա իր մահկանացուն կնքեց երկարատեւ հիվանդությունից հետո, ՌԴ մայրաքաղաքի կենտրոնական կլինիկական հիվանդանոցում:**

**Կամո Բաբիի Ուդումյանը ծնվել է 1927 թվականին Հայկական ԽՍՀ Շամշադինի շրջանի Բերդ գյուղում, ծառայողի ընտանիքում: 1950 թվականին գերազանցությամբ ավարտել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Հետաքրքրական է, որ դեռ ուսումնառության շրջանում, 1948 թ. գերազանց ուսման համար պարգեւատրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով:**

**Տակավին ուսանող, 1949 թ. նա ընտրվում է ԵՊՀ կոմերիտմիության կոմիտեի քարտուղար: Այնուհետեւ ընդունվում է ասպիրանտուրա, իսկ 1952 թ. Ուդումյանն արդեն ՀԼԿԵՄ Երեւանի քաղկոմի առաջին քարտուղարն էր: 1957-59 թթ. վարել է գիտական աշխատանք, եղել ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի համակարգման խորհրդի, իսկ այնուհետեւ՝ ԳԱ Պատմության ինստիտուտի գիտական քարտուղար:**

**1959 թ. երիտասարդ պատմաբանին ընտրում են ՀԿԿ Շամշադինի շրջկոմի առաջին քարտուղար, այսինքն՝ նա դառնում է հայրենի շրջանի ղեկավար:**

**1962 թ. վերադառնում է գիտական աշխատանքի Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտ: 1962-63 թթ. նա Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտորն էր, հետո՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի փոխտնօրենը գիտական աշխատանքների գծով:**

**1964-67 թթ. Կ. Ուդումյանը ղեկավարել է Հայկական մանկավարժական ինստիտուտը: 1967-72 թթ. նա ՀԽՍՀ մշակույթի նախարարն էր, եւ նրա պաշտոնավարման տարիները նշանավորվեցին բազմաթիվ նախաձեռնություններով. այդ շրջանում էր, երբ փառավոր կերպով նշվեցին Կոմիտասի ու Հովհաննես Թումանյանի 100-ամյա հոբելյանները, Փարիզի Լուվրում կազմակերպվեց «Հայ արվեստը Ուրարտուից մինչեւ մեր օրերը» մեծածավալ ցուցահանդեսը: Ազդեցիկ նախարարի աջակցությունն էին վայելում շատ արվեստագետներ, Ուդումյանը սատարում էր ազգայինը, նորը, առաջադիմականը: Հայ մշակույթի գործիչներից շատերը, մասնավորապես, մեծանուն խմբավար Հովհաննես Չեքիջյանը, Ուդումյանին համարում են հանրապետության մշակույթի ամենաարդյունավետ նախարարը, նրա անունը բարի խոսքերով են հիշում մեր ստեղծագործական կոլեկտիվներում:**

**1972 թ. Կ. Ուդումյանը նշանակվում է ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար, իսկ 1975 թ. դառնում է ԽՍՀՄ դեսպանը Նեպալի Թագավորությունում: 1979-87 թթ. նա ԽՍՀՄ դեսպանն էր Լյուքսեմբուրգում: Լյուքսեմբուրգյան «Թագեբլատ» թերթը մի առիթով գրել է. «Մեծ եռանդի տեր մարդ, աշխույժ զրուցակից, պարոն Ուդումյանը շատ է տարբերվում իր նախորդներից: Հակառակ դիվանագիտական միջավայրում ընդունված մենախոսությունների, նա բանավեճ վարել գիտի եւ ազատորեն շարադրում է իր մտքերը: Իր գործունեության մասշտաբները համաեվրոպական բնույթ են կրում: Պետք է ծնվել դիվանագետ. Կամո Ուդումյանը, իր մասնագիտությանը տիրապետելով կատարելապես, զրույցի ընթացքում հոյակապ օգտագործում է նաեւ իր անձնական հաղթաթղթերը, իսկ մեկ-մեկ գործի դնում իր ողջ հմայքը»:**

**Մեր կողմից հավելենք, որ ԽՍՀՄ հայազգի դեսպանի հյուրասեր ընդունելությունները, մասնավորապես, խաշի հրավերները, մեծ հեղինակություն էին վայելում ողջ դքսությունում, դրանց ներկա էին գտնվում նույնիսկ Լյուքսեմբուրգի դուքսի ընտանիքի անդամները:**

**Արտերկրից վերադառնալով Մոսկվա՝ աշխատել է ԽՍՀՄ ԱԳՀ տեղեկատվության վարչության պետի տեղակալ: Երբ ԽՍՀՄ արտգործնախարար Անդրեյ Գրոմիկոն դարձավ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, Ուդումյանին հրավիրեց խորհրդատուների խմբի ղեկավարի տեղակալ: Հետագայում հայորդին աշխատեց Մշակույթի խորհրդային հիմնադրամում:**

**1967-75 թթ. ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Պատմական գիտությունների դոկտոր էր, մի շարք պատմական գրքերի հեղինակ:**

**2001 թ. Ռուսաստանի նախագահի կարգադրությամբ արտակարգ ու լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան ունեցող պաշտոնաթող դիվանագետների թվում, արտաքին քաղաքականության բնագավառում ՌԴ-ին մատուցած առանձնահատուկ ծառայությունների համար նրան սահմանվեց լրացուցիչ պատվովճար:**

**2008 թ. Ուդումյանի անունը շնորհվել է «Երեւանի բաց համալսարանի» էլեկտրոնային գրադարանին:**

**Երբ 2002 թ. դեկտեմբերին նշվում էր Ուդումյանի ծննդյան 75-ամյակը, ՌԴ ԱԳՆ կոլեգիան ու վետերանների հասարակական կազմակերպությունը նրան հղած շնորհավորագրում նշել են. «Այս տարիներին Ձեր անցած կյանքի ուղին լի էր հետաքրքրագույն իրադարձություններով ու ձեռքբերումներով: Երեւելի քաղաքական աշխատողի Ձեր արհեստավարժ որակները հաջողությամբ իրագործվեցին Նեպալում, այնուհետեւ՝ Լյուքսեմբուրգում արտակարգ ու լիազոր դեսպանի պաշտոնում: Այդ երկրներում Ձեր աշխատանքն առանձնանում էր Ձեր առջեւ ծառացած խնդիրները լուծելիս արհեստավարժությամբ, ծավալով, ստեղծագործական ակտիվությամբ: Գործընկերներն իրավամբ են գնահատում Ձեր գործունեությունը, հիշում Ձեր բարեսրտությունը, մարդկանց նկատմամբ ուշադրությունը: Այդ գնահատականի հաստատումը Ձեր պետական պարգեւներն են՝ շքանշաններն ու մեդալները»:**

**Կամո Ուդումյանը կապված էր հայրենիքի հետ, ակտիվորեն մասնակցում էր Մոսկվայի հայ համայնքի ազգային կյանքին, մի քանի տարի եղել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի թեմական խորհրդի ատենապետը: Այդ խելացի, սրամիտ, ջերմ ու կենսուրախ մարդուն միշտ կհիշեն նրա ժամանակակիցներն ու նրան ճանաչողները:**

**Հանգուցյալի կտակի համաձայն՝ դիակիզումից հետո նրա աճյունը կբերվի Հայաստան, կցրվի Շամշադինի շրջանում:**

**ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ**

ՄՈՍԿՎԱ

# Առայժմ հրկիզում են գույքն ու տեխնիկան

Մոսկվայում արդեն մեկ տարուց ավելի շարունակվում են պետական մարմինների ու հատկապես ոստիկանական բաժանմունքների եւ պետավտոտեսուչների հենակետերի, խոշոր կորպորացիաների գրասենյակների, թանկարժեք ավտոմեքենաների հրկիզումները: Ոստիկանությունն ու փորձագետները ընդունում են, որ ներկա քաղաքական համակարգը (ենթադրվում է` անարդար) ծնունդ է տվել արմատական ընդվզումների նոր տեսակի: Խոսքը վերաբերում է ծայրահեղական անարխիստներին:

Առաջին անգամ նրանք իրենց մասին հայտարարեցին 2010 թվականի ապրիլի 27-ին, երբ Մոսկվայի մարզի ներքին գործերի գլխավոր վարչության ստորաբաժանումներից մեկի շենքի պատուհանի վրա նետվեցին մի քանի «Մոլոտովի կոկտեյլներ»: Դրանցից հետո հարձակման ենթարկվեցին պետական կառույցներ` «կեղեքման մարմինները», խոշորագույն ընկերությունների` «աշխատանքի եւ բնության շահագործողների» գրասենյակները, նույնիսկ կառավարող կուսակցության` «պորիների» հռչակված «Եդինայա Ռոսիայի» ընդունարանները: Քարեր ու հրկիզաշշեր են սլանում միլիոն դոլար արժեցող ավտոմեքենաների ուղղությամբ:

Սոցիալական արդարության կարգախոսներով պայքարի ելած ռուսաստանցի անարխիստները օգտվում են աշխարհում ավելի ու ավելի լայն տարածում գտնող «Սեւ բլոկ» կազմակերպության տակտիկայից: Դա ուժային բողոքի միասնական շարժում է, որը միավորում է ծայրահեղ ձախ հայացքներով մինչեւ 30 տարեկան երիտասարդների, որոնք կրում են սեւ հագուստ եւ գաղտնի ու անանուն են ամբողջ աշխարհում: ՌԴ-ի ՆԳՆ-ի տվյալներով, Ռուսաստանի յուրաքանչյուր տարածաշրջանում գործում են մի քանի տասնյակ 5-10 հոգուց կազմված բջիջներ: Մոսկովյան իրադարձությունները ցույց են տալիս, որ ձախ կողմնորոշման երիտասարդությունը հետզհետե ավելի արմատական է դառնում:

Առանձնակի է անարխիստների ատելությունը իրավապահ մարմինների ու հատկապես ոստիկանության նկատմամբ: Սրանք համարվում են հասարակության ամենակոռումպացված խավերից մեկը, որոնք գործիք դառնալով իշխող անարդար վերնախավի համար, ծայրահեղ անարդար են սեփական ժողովրդի հանդեպ: Ոստիկանության կամ դատախազության աշխատակիցը իր ազնիվ աշխատանքով չի կարող ձեռք բերել թանկարժեք ավտոմեքենա, նման փողեր կարող են ծախսել միայն «աշխատավոր ժողովրդին ճնշողները»: Անարխիստներին կտրականապես դուր չի գալիս ներկա անարդար իրավիճակը, եւ նրանք հանդես են գալիս այն համոզմունքով, որ դրան կարող է հակազդել միայն ուժը:

Եթե, մի կողմից, անարխիստներին այստեղ լուրջ ուժ չեն համարում (առայժմ առավելապես` խուլիգանական), ապա, մյուս կողմից, չեն կարող անհանգստություն չպատճառել նրանց գործողությունների զարգացման որոշ միտումները: Խուլիգանական որակվող արարքները աստիճանաբար վերածվում են ահաբեկչական գործողությունների, որոնցից կարող են տուժել անմեղ մարդիկ: Ճիշտ է, «Սեւ բլոկի» ակտիվիստները հայտարարում են, որ իրենք գործում են հաշվենկատորեն, եւ տարվա մեջ իրենց կատարած հարձակումներից ոչ մի պատահական անցորդ չի վնասվել: Սակայն անարխիստները սկսել են օգտագործել ինքնաշեն ռումբեր, ինչն արդեն չի կարող տալ անվտանգության երաշխիքներ կողմնակի մարդկանց: Եվ առհասարակ ինչքա՞ն են հարիր սոցիալական արդարության ռոբինհուդյան ձգտումները ու ահաբեկչական ելույթները:

Առայժմ Ռուսաստանի ոստիկանությունը ոչ մի շոշափելի արդյունքի չի հասել արմատական անարխիստների դեմ պայքարում: Դա նաեւ այն պատճառով, որ անարխիստները չեն ձեւավորվում որպես կազմակերպական ուժ ու դառնում տեսանելի: «Մենք չունենք ոչ մի հստակ կազմակերպություն կամ կանոնադրություն,- հայտարարում են «Սեւ բլոկի» ներկայացուցիչները,- մեզ միավորում է միայն ուղղակի ներգործության տակտիկան: Մեզանից բացի գոյություն ունի անարխիստական խմբերի ու առանձին անձանց մի ամբողջ ցանց, որոնք կեղեքիչ մարմինների դեմ պայքար են մղում արմատական մեթոդներով»:

Ռուսաստանցի անարխիստների կողմնորոշումներում կա եւ մի միտում, որը չի կարող չմտահոգել արդեն մեզ. նրանք ավտոկանգառներում հրկիզում են կովկասյան համարներով մեքենաներ: Եվ ո՞վ ասաց, որ արմատական անարխիստներն իրենք կամ որոշ քաղաքական ուժերի ներգործությամբ չեն փորձի չտարբերակել տեղացի հյուսիսկովկասցիների ու եկվոր հարավկովկասցիների ավտոմեքենաները: Եվ ոչ միայն տեխնիկան:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

# «Եվրոտեսի՞լն» էլ կմտնի «սեւ ցուցակ»

Ըստ կարգի, «Եվրոտեսիլ»-ի պաշտոնական կայքէջը տարբերաբար նյութեր է տեղադրում հաղթած երկրի մասին: Օրերս հերթական նյութը նվիրված է եղել Բաքվին, որը նախապատրաստվում է հյուրընկալել գալիք տարվա «Եվրոտեսիլ»-ը: Բայց ինչպես միշտ, այս անգամ էլ Ադրբեջանի «հանդեպ թույլ է տրվել տեղեկատվական աններշնչություն»: Ոչ, խոսքը Լեռնային Ղարաբաղի մասին չէ: «Եվրոտեսիլ»-ի պաշտոնական էջը գրել է, որ «Բաքուն հին պարսկական քաղաք է, որտեղ 19-րդ դարում նավթային բում է եղել` նպաստելով քաղաքի արդյունաբերականացմանը, որից հետո խորհրդայնացվել է»:

Բնական է, որ այդ «աններշնչությունը» նկատվել է Ադրբեջանում: Սակայն, ի տարբերություն այլ դեպքերի, այս անգամ լրատվամիջոցներն իրենց ընթերցողներին կամ համացանցի այցելուներին կոչ չեն անում նամակ-բողոք հղել «Եվրոտեսիլ»-ի պաշտոնական կայքէջին: Միայն զգուշավոր հույս են հայտնում, որ «թույլ տրված սխալը կուղղվի»: Եվ, իհարկե, ներկայացնում են իրենց «մեկնաբանությունը», համաձայն որի «Բաքուն տարբեր դարաշրջաններում եղել է ադրբեջանցիների ստեղծած պետական կազմավորումների կենտրոն, երկար ժամանակ կառավարել Հարավային Կովկասը եւ երբեք պարսկական պետության մաս չի կազմել»:

Թե «ադրբեջանական ո՞ր պետական կազմավորումների կենտրոնն է եղել» Բաքուն, այդ մասին, իհարկե, ոչինչ չի ասված: Քանի որ նման «պետական կազմավորումներ» չեն եղել առհասարակ: Իսկ որ Բաքուն մաս է կազմել պարսկական պետությանը, այդ է վկայում 1813թ. Գյուլիստանի պայմանագիրն Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ, որով Բաքվի խանությունը Պարսկաստանից «ընդմիշտ անցել է» Ռուսաստանին: Հո չէր կարող խանությունը լինել պարսկական, պարսկական պետության մաս, իսկ նրա կենտրոնը` «ոչ պարսկական, այլ ադրբեջանական»:

Ամբողջ Եվրոպան գիտի, որ մինչեւ 19-րդ դարի երկրորդ կեսը Բաքուն շարունակում էր մնալ թեեւ ռուսահպատակ, բայց մեծ մասամբ պարսկական քաղաք: Եվ միայն նահանգական կենտրոնը Շամախիի ավերիչ երկրաշարժի պատճառով այնտեղից Բաքու տեղափոխելուց եւ մանավանդ եվրոպացիների կողմից Ապշերոնի թերակղզում նավթարդյունահանություն սկսելուց հետո է, որ այդ աննշան քաղաքը, շնորհիվ բազմազգ բնակչության ներհոսքի, աստիճանաբար կազմավորվել եւ զարգացում է ապրել:

Բաքուն, ինչ խոսք, ցարական Ռուսաստանի արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկն էր: Բայց դա «ադրբեջանական» քաղաք չէր, այլ` ռուսաստանյան, որտեղ, ի թիվս այլոց, առաջնակարգ էր նաեւ հայ առեւտրաարդյունաբերական բուրժուազիան: Բաքուն նաեւ հայ մշակույթի կենտրոններից մեկն էր: Ինչ վերաբերում է «Հարավային Կովկասը կառավարելուն», ապա փաստ է, որ Կովկասի փոխարքայանիստ քաղաք եղել է Թիֆլիսը` իր դարձյալ բազմազգ եւ բազմամշակութային ընդգծվածությամբ:

Իրականությունն, ի տարբերություն ադրբեջանական կողմի` մեծ մասամբ անհաջող քարոզչական հնարքների, պահանջում է իրենը: Եվ եթե «Եվրոտեսիլ»-ի պաշտոնական կայքէջում Բաքուն հիշվել է որպես ի սկզբանե պարսկական քաղաք, ապա դրանում զարմանալի ոչինչ չկա. մարդիկ բարեխղճորեն արձանագրել են փաստը: Ինչպես` եթե գրեին, որ Ստամբուլը բյուզանդական քաղաք է եղել:

Ի՞նչ կա դրանում վիրավորական: Չէ՞ որ խոսքը հեռավոր անցյալի մասին է: Իսկ որ Բաքուն` որպես Ադրբեջանի մայրաքաղաք, եկող տարի կհյուրընկալի «Եվրոտեսիլ»-ը, դա արդեն այսօրվա իրականությունն է: Ինչից, ի դեպ, ոչ ոք ողբերգություն չի ստեղծում: Ի վերջո, հենց նման միջոցառումներով է, որ Բաքուն կարող է դառնալ քաղաքակիրթ քաղաք: Իսկ ի՞նչ երաշխիք, որ «Եվրոտեսիլ»-ի կազմակերպիչները հատկապես ադրբեջանական զուգերգը հաղթանակի չեն արժանացրել այն մտադրությամբ, որ այդ քաղաքն առիթ ունենա ձերբազատվել իր մղձավանջային անցյալից: Դրա համար հարկավոր է երախտագետ լինել: Ոչ թե «սեւ ցուցակ»-ի թաքուն սպառնալիքներ հնչեցնել նրանց հասցեին, ովքեր հորդորում են ընդունել անցյալն ինչպես եղել է եւ նրա հետ հաշտ ապրել:

Վ. Ա.

ՏՐԻՊՈԼԻ

# Լիբիա. ապստամբները պատրաստվում են Բենի-Վալիդի գրոհին

## Խամիս Քադդաֆին սպանված է



**Մուամմար Քադդաֆիի բանակը պաշարված է Բենի-Վալիդ քաղաքում, բայց հրաժարվում է զենքը վայր դնել: Ապստամբների հետ բանակցություններն արդյունք չեն տվել: Ենթադրվում է, որ Քադդաֆին գտնվում է հենց Բենի-Վալիդում, որը նրա բանակի փաստորեն վերջին հենակետն է, նշում է Ռոյթեր գործակալությունը:**

**Այդ քաղաքում ապրող Վարֆալլահ ազդեցիկ ցեղը հավատարիմ է մնում Մուամմար Քադդաֆիին: Անցումային ազգային խորհրդի (ԱԱԽ) տեղեկությունների համաձայն, Բենի-Վալիդում են Քադդաֆիի որդիներից երկուսը:**

**«Ալ Ջազիրա» հեռուստաալիքը հաղորդում է, որ ապստամբները գրավել են Բենի-Վալիդի շրջակա բոլոր ռազմավարական օբյեկտները եւ «պատրաստվում են գրոհել քաղաքը»:**

**ՆԱՏՕ-ի օդուժը շարունակում է հարվածել կառավարական զորքերի դիրքերին, ամեն օր հաղորդելով «բունկերի, հրանոթի կամ տանկի» ոչնչացման մասին: Սեպտեմբերի 4-ին թիրախներ են ոչնչացվել Բենի-Վալիդում, Սիրտում եւ այլ քաղաքներում:**

**ԱԱԽ-ն հաստատել է Մուամմար Քադդաֆիի որդիներից մեկի` գնդապետ Խամիս Քադդաֆիի սպանության վերաբերող լուրերը: Ապստամբների պաշտոնական ներկայացուցչի խոսքերով` Խամիսը սպանվել է Տրիպոլիի մոտակայքում մղված մարտերի ժամանակ եւ թաղված է Բենի-Վալիդի շրջակայքում: Պաշտոնական ներկայացուցիչն ավելացրել է, որ սպանված է նաեւ Լիբիայի հետախուզության պետ Աբդուլլահ ալ Սենուսիի որդին` Մուհամմեդը:**

**Ֆրանսպրեսը հավելում է, որ 28-ամյա Խամիս Քադդաֆին սպանվել է օգոստոսի 27-ին: Նա լիբիական հեղափոխության առաջնորդի կրտսեր որդին էր եւ բանակի հատուկ ուժերի 32-րդ բրիգադի հրամանատարը: Ավարտել էր Տրիպոլիի ռազմական ակադեմիան, ապա` Մոսկվայի Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան:**

**Լիբիայի նոր իշխանությունները Տրիպոլիում ձերբակալել են Մուամմար Քադդաֆիի մերձավոր զինակիցներից մեկին` Ահմեդ Աբդուլլահ Օունին: Ներկայումս Օունը բանտում է, իսկ քննիչները երեկ խուզարկել են նրա տունը, հաղորդում է «Ռոսիա-24» հեռուստաալիքը:**

**Քադդաֆիի ավագությամբ երրորդ որդին` Սաադին, CNN հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հայտարարել է իր չեզոքության մասին: Նա թղթակից Նիկ Ռոբերտսոնին ասել է, որ ինքը մոտավորապես երկու ամիս չի տեսել իր հորը եւ եղբորը` Սեյֆ ալ Իսլամին: CNN-ի տվյալներով, Սաադի Քադդաֆին վերջերս փորձել է հրադադարի հաստատման նպատակով բանակցել ապստամբների ներկայացուցիչների հետ: Սակայն անցյալ շաբաթ ռադիոյով Սեյֆ ալ Իսլամի արած ռազմաշունչ կոչերից հետո ապստամբների հրամանատարները դադարեցրին բանակցությունները: Սաադին հարցազրույցում ընդգծել է սեփական դիրքորոշման չեզոքությունը:**

Պ. Ք.

# Մերկելի կուսակցությունը պարտվեց տեղական ընտրություններում



**Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի կուսակցությունը` Քրիստոնեա-դեմոկրատական միությունը (ՔԴՄ), պարտություն է կրել Մեկլենբուրգ-Առաջավոր Պոմերանիա երկրամասի տեղական ընտրություններում: Ի դեպ, դա Մերկելի ծննդավայրն է, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Սեպտեմբերի 4-ին անցկացված ընտրությունների վերջնական արդյունքները դեռ չեն հրապարակվել, բայց նախնական տվյալների համաձայն` ՔԴՄ-ն ստացել է 24 տոկոս, իսկ գլխավոր մրցակիցը` Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (ԳՍԴԿ), 37 տոկոս: Երրորդ տեղում «Ձախերի» կուսակցությունն է (17 տոկոս), չորրորդում` «Կանաչները» (8,5 տոկոս):**

**Մեկլենբուրգ-Առաջավոր Պոմերանիայի նախորդ ընտրություններում (2006 թ.) ՔԴՄ-ն ստացել էր 29 տոկոս, ԳՍԴԿ-ն` 30 տոկոս:**

**Փորձագետներից շատերը կանխատեսում են, որ երկրամասում ՔԴՄ-ն եւ ԳՍԴԿ-ն վերստին կկազմեն կառավարող կոալիցիա, ինչպես 2006-ին: Սակայն որոշ վերլուծաբաններ կարծում են, որ ԳՍԴԿ-ն կարող է դաշն կնքել «Ձախերի» եւ «Կանաչների» հետ:**

**Մեկլենբուրգ-Առաջավոր Պոմերանիան Գերմանիայի սակավաբնակ երկրամասերից մեկն է. այնտեղ ընտրողների թիվը մեկուկես միլիոն է:**

**Ավելի վաղ 2011-ին ՔԴՄ-ն արդեն մի քանի լուրջ պարտություն էր կրել տեղական ընտրություններում: Մասնավորապես մարտին Մերկելի կուսակցությունը 58 տարում առաջին անգամ պարտվել էր Բադեն-Վյուրտեմբերգ երկրամասում:**

ԳՈՒՅԺ

# ԱՄՆ-ում վախճանվեց Նիկողոս Թահմիզյանը

1990-ականների սկզբին, դեպքերի եւ այն ժամանակվա իրողությունների բերումով, հայ երաժշտագիտության ամենաերեւելի դեմքերից մեկը տեղափոխվեց ԱՄՆ եւ հիմա ցավում ենք ոչ միայն նրա կորստի համար, այլ նաեւ այն բանի, որ մի խոշոր հայագետ մահացավ հայրենիքից, իր գիտական միջավայրից, իրեն խորապես հարգող գործընկերներից հեռու:



Իհարկե, այս վերջին տարիներին՝ իր հիվանդ եւ տարագիր տարիներին, այնտեղ հրատարակեց մեծերին նվիրված ուսումնասիրություններ (Սայաթ-Նովա, Տ. Չուխաջյան, Կոմիտաս), իր խազագիտական երկերի համահավաքը, իր «Ոսկեփորիկ» ժողովածուի լրամշակված տարբերակը, սակայն այսպիսի արդյունավետությունն անգամ, գրքերի այս առատությունն իսկ անասելի նվազ էր այն բանի համեմատ, ինչ նա կարող էր, եթե .......

Նիկողոս Թահմիզյանի տեղն ու դերն այս մահախոսականով չի որոշվելու. սոսկ կորստի մեծությունը բաղդատումի մեջ գծելու ցանկությամբ՝ տեղին է հիշել, որ նա հայագիտության մեջ որոշակիորեն առանձնացող հեղինակներից է: Այդ ոլորտի բոլոր գիտաճյուղերի մեջ երաժշտագիտությունը, այն էլ միջնադարյան երաժշտագիտությունը, միշտ եղել է քիչ երախտավորների նվիրումի դաշտ: Ոչինչ հավելելով՝ կարելի է ասել, թե խորհրդահայ իրականության մեջ հայ միջնադարյան երաժշտության հարցերով զբաղվող երաժշտագետների շարքում նա հաջորդում էր իր համբավավոր ուսուցչին՝ Քր. Կուշնարյանին, իր երախտաշատ ավագ գործընկերոջ Ռ. Աթայանի արժանի լծակիցն էր: Վստահ կարելի է պնդել, որ այդ բերրի, բայց գաղափարական վտանգներ ունեցող ժամանակներում հայ միջնադարյան մասնագիտացված երգը կամ հայ հոգեւոր երգարվեստն իր եկեղեցական միջավայրում, պատմական տեսախորքի վրա քննելու մեթոդաբանությունը մեծ չափով մշակեց հենց Նիկողոս Թահմիզյանը: Անգամ եզրաբանությունն ու ոլորտին հարմար գիտական բառամթերքը, այս «մասնագիտացվածը», այս «տեսախորքը» եւ էլի բառեր ու բառակապակցություններ Մելգոնյան վարժարանի նախկին սանն այնքան հեշտությամբ դուրս էր քաշում լեզվի ով իմանա ինչ խորխորատներից եւ օրգանապես ձուլում արդի գիտական լեզվին: Նրա բազմաթիվ հոդվածներով, Գրիգոր Նարեկացուն եւ հայ միջնադարյան ողջ երգարվեստի պատմությանն ու վերլուծությանը, Ներսես Շնորհալուն, հայ միջնադարյան երաժշտության տեսական խրթին հիմնահարցերին նվիրված մենագրություններով վերակազմվեց հայ հոգեւոր երգի զարգացման հազարամյակը, ուշմիջնադարյան ու նոր ժամանակների մի քանի հարյուր տարին: Այսօր ինչ էլ գրվի այս ոլորտում կա՛մ նրա կազմած փուլայնացմամբ է գրվելու, կա՛մ նրա հիմնավորումների համեմատ նոր փաստարկների ու հակափաստարկների ճամփով է ընթանալու: Հայ միջնադարյան երաժշտության ուսումնասիրության ոլորտում նրան շրջանցելն այլեւս թերի գիտական մակարդակի ցուցանիշ է:

Նիկողոս Թահմիզյանի կյանքն էլ, մահն էլ, ինչպես հաճախ լինում է մեզանում, կրում է ժողովրդի պատմության դրոշմը, դրա անձնավորված տարբերակն է. սփյուռքահայ, որ կրթվել է Կիպրոսի Մելգոնյան վարժարանում, հայրենադարձվել, սովորել Երեւանի Կոմիտասի անվ. կոնսերվատորիայում, եղել նվագախմբային արտիստ, կատարելագործվել Լենինգրադի կոնսերվատորիայում, ապրել եւ գործել Հայաստանում, ապա արտագաղթել ... Ափսոս, որ այսօր պակասեց մեզանից, ափսոս, որ չգրեց շատը իր կարեցածից, ափսոս, որ հեռու է եւ միայն այսպես կարող ենք հրաժեշտ տալ մեծ երախտավորին՝ մաղթելով երկնային տեղիների խաղաղություն:

*Երեւանի Կոմիտասի անվ.*
*պետ. կոնսերվատորիա*
*Հայաստանի երաժշտագետների եւ*
*կոմպոզիտորների միություն*
*ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ*
*Մաշտոցի անվ. հին ձեռագրերի*
*ինստիտուտ - «Մատենադարան»*

# Ալ Պաչինոյի մրցանակն ու ֆիլմը Վենետիկի փառատոնում

Վենետիկի Լիդո կղզում օգոստոսի 31-ից անցկացվում է հերթական միջազգային կինոփառատոնը, որի ընթացքում արդեն ցուցադրվել են մի շարք հետաքրքրական ֆիլմեր: Փառատոնի պատմության մեջ առաջին անգամ բացման օրը հանդիսականներին ներկայացվել է միանգամից երկու ժապավեն, նշում է Ֆրանսպրեսը:



Առաջինը Ջորջ Կլունիի «Իշխանության աստիճանները» ֆիլմն է, որը մտնում է փառատոնի հիմնական ծրագրի մեջ: Սյուժեն կառուցված է ԱՄՆ-ի նախագահական ընտրարշավի իրադարձությունների վրա: Կլունին ֆիլմի ոչ միայն բեմադրիչն է, այլեւ սցենարիստը, պրոդյուսերը, ինչպես նաեւ կատարում է գլխավոր դերերից մեկը:

Բացման օրը ցուցադրված երկրորդ ֆիլմը Վիկտոր Կոսակովսկու «Կեցցե՛ն հակոտնյաները» վավերագրական ժապավենն է, որը փառատոնի արտամրցութային ծրագրի մեջ է:

Փառատոնի հիմնական ծրագիրն ընդգրկում է 22 ֆիլմ, որոնց մեջ կարելի է առանձնացնել Ալեքսանդր Սոկուրովի «Ֆաուստը», Ռոման Պոլանսկու «Սպանդը», Դեւիդ Կրոնենբերգի «Վտանգավոր մեթոդը», Ֆիլիպ Գարելի «Կրքի ամառը» եւ այլ գործեր:

Ժյուրիի նախագահն է Դարեն Արանովսկին, որը 2008-ին Վենետիկում «Ոսկե առյուծ» մրցանակ ստացավ «Ռեսլեր» ֆիլմի համար: Փառատոնը կավարտվի սեպտեմբերի 10-ին:

Արտամրցութային ծրագրում, ի թիվս այլ ֆիլմերի, ներկայացված են երգչուհի Մադոննայի ռեժիսորական երկրորդ աշխատանքը, ինչպես նաեւ Ալ Պաչինոյի «Ուայլդի «Սալոմեն» կիսավավերագրական ֆիլմը: Վերջինս Օսկար Ուայլդի «Սալոմե» պիեսի ինքնօրինակ էկրանավորումն է:

Հոլիվուդյան դերասան եւ բեմադրիչ Ալ Պաչինոն այս տարի Վենետիկում Jaeger-Le Coultre պատվավոր մրցանակի արժանացավ կինեմատոգրաֆիական նվաճումների համար: Նրա «Ուայլդի «Սալոմեն» ֆիլմը կենսագրական էտյուդ է, Օսկար Ուայլդի մասին եւ միաժամանակ Բրոդվեյում նրա «Սալոմե» պիեսի ներկայացման պատմությունը: Ալ Պաչինոն ֆիլմի թե՛ բեմադրիչն է եւ թե՛ Հերովդեսի դերակատարը, իսկ գլխավոր հերոսուհու դերը կատարում է Ջեսիկա Չեստեյնը: Նա վերջերս հանդես է եկել նաեւ Թերենս Մալիքի «Կենաց ծառ» եւ Ջոն Մեդդենի «Հատուցում» ֆիլմերում:

Վենետիկի ընթացիկ փառատոնում տղամարդու դերի լավագույն կատարման համար նախատեսված մրցանակի գլխավոր հավակնորդն են համարում Մայքլ Ֆասբենդերին, որը հանդես է գալիս ամերիկացի Դեւիդ Կրոնենբերգի «Վտանգավոր մեթոդ» եւ բրիտանացի Սթիվ Մակքուինի «Ամոթ» ֆիլմերում: Փառատոնային այդ ֆիլմերից առաջինը պատմում է հոգեվերլուծության հիմնադիրներ Ֆրոյդի եւ Յունգի մասին (Ֆասբենդերը կատարում է Յունգի դերը): Իսկ «Ամոթ» ֆիլմում Ֆասբենդերը մարմնավորում է նյույորքցի սեռական մոլագարի, որին բնավ չի հետաքրքրում մարդկային փոխհարաբերությունների հուզական կողմը:

Սեպտեմբերի 4-ին փառատոնում ցուցադրվել է իտալացի Էմմանուելե Կրիալեզի «Մայրցամաք» ֆիլմը, որտեղ փորձ է արվում իմաստավորել Սիցիլիայի իտալացիների եւ աֆրիկացի անօրինական ներգաղթյալների փոխհարաբերությունները:

**Պ. ՔԵՇԻՇՅԱՆ**

# Անապայում՝ «Կինոշոկ 2011» ամենամյա փառատոնի օրերին կանցկացվի հայկական ֆիլմերի հատուկ ծրագիր

Անապայում սեպտեմբերի 11-20-ը կայանալիք «Կինոշոկ 2011» փառատոնի արտամրցութային ծրագրում նախատեսված է անցկացնել հայկական ֆիլմերի հատուկ ցուցադրության ծրագիր՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին:

Անապայում ցուցադրվելիք ֆիլմերի ցանկում ընդգրկված են Ալբերտ Մկրտչյանի «Տխուր փողոցի լուսաբացը», Հարություն Խաչատրյանի «Պոետի վերադարձը», Արման Երիցյանի «Վերջին լարախաղացը», Մարիամ Օհանյանի «Կնոջ երեք գույնը», Տիգրան Խզմալյանի «Դեպի Արարատ», Արման Մանարյանի «Սասունցի Դավիթ» լիամետրաժ մուլտֆիլմը, ինչպես նաեւ մուլտֆիլմերի ընտրանի առանձին ծրագիրը:

Հայկական կինոյի օրերը կմեկնարկի սեպտեմբերի 13-ից:

Բացի այս, «Կինոշոկ 2011»-ի հիմնական մրցութային ծրագրի համար ընտրված 14 ֆիլմերի թվում է Հայաստանի ազգային կինոկենտրոնի աջակցությամբ նկարահանված, Արշալույս Հարությունյանի «Թափառում» ֆիլմը:

Հայաստանի անկախության 20-ամյակի միջոցառումներին մասնակցելու նպատակով Հայաստանից Անապա կմեկնեն ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական Մարատ Հայրապետյանը, Ազգային կինոկենտրոնի փոխտնօրեն Վարդան Աբովյանը, կինոգետ Դավիթ Մուրադյանը եւ դերասան Ռաֆայել Քոթանջյանը:

*Հայաստանի ազգային կինոկենտրոնի*
*մամուլի ծառայություն*

# «Հայոց պետականություն. 5000-ամյա եւ 20-ամյա»



ՀՀ կրթության եւ գիտության նախարարության նախաձեռնությամբ երեկ տեղի ունեցավ «Հայոց պետականություն. 5000-ամյա եւ 20-ամյա» խորագրով համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկան՝ ՀՀ ԿԳՆ Գեղագիտության ազգային կենտրոնի տնօրեն **Լեւոն Իգիթյանը**, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն **Իգոր Կլիմկոն**, ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, որ իր խոսքում ասաց. «Այս տարին խորհրդանշական է, քանի որ տոնում ենք Հայաստանի անկախության 20-ամյակը եւ ցուցահանդեսի խորագիրը մեզ տանում է դեպի անցյալ՝ 5000-ամյա պատմություն ունեցող, միեւնույն պահին գտնվում ենք ներկայում եւ պատրաստվում ենք ցատկ կատարել դեպի ապագա, վստահ լինելով, որ մենք ունենք այնպիսի սերունդ, որ իր վրա կկրի պետականության կերտման եւ զարգացման ողջ բեռը»:

Միջոցառումը նվիրված է հայոց պետականության պատմությանը: Փառատոնին ներկայացվել է շուրջ 1000 աշխատանք. Սփյուռքի 18 երկրներից ( ԱՄՆ, Արգենտինա, Բելառուս, Բելգիա, Բուլղարիա, Թուրքիա, Իսպանիա, Իրան, Լիբանան, Չինաստան, Ռումինիա, Ռուսաստան, Սիրիա, Ուզբեկիստան, Ուկրաինա, Ուրուգվայ, Ֆրանսիա, Քուվեյթ):

ՀՀ ԿԳՆ Գեղագիտության ազգային կենտրոնում ներկայացված է առաջին փուլում ընտրված 243 աշխատանք: Մասնակիցները իրենց նկարներում պատկերել են հայոց պատմության կայացման եւ զարգացման համար կարեւոր անցքեր, երեւույթներ, պետական ու մշակութային գործիչների կերպարներ, որոնք հետագայում կտպագրվեն ցուցահանդեսի ալբոմում:

Կազմակերպվել է նաեւ ինտերնետային ցուցահանդես «Facebook» սոցիալական ցանցում, որի շրջանակում կանցկացվի առցանց քվեարկություն, եւ արդյունքները կհրապարակվեն ցուցահանդեսի փակման օրը:

Ցուցահանդեսը գործում է այսօրվանից մինչեւ հոկտեմբերի 5-ը:

Նախագծի կազմակերպմանը ֆինանսական աջակցություն է ցույց տվել «ԱրմենՏել» ՓԲԸ-ն:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**



# Մարզական

## Դարչինյանն անկասար թողեց Մբամբայի երազանքը

*Վախթանգը չեմպիոնական գոտին նվիրեց Սերժ Սարգսյանին*



ՖՈՏՈԼՈՒՐ

Հայաստանում պրոֆեսիոնալ բռնցքամարտի իր անդրանիկ մենամարտը հարավաֆրիկացի Էվանս Մբամբայի նկատմամբ տոնած տպավորիչ հաղթանակով ավարտեց Վախթանգ Դարչինյանը՝ պաշտպանելով թեթեւագույն քաշային կարգում IBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ճիշտ է, նրան չհաջողվեց մենամարտն ավարտել նոկաուտով, սակայն ողջ հանդիպման ընթացքում հայ բռնցքամարտիկի առավելությունը զգալի էր: «Կատաղած ցուլը» շատ լավ էր նախապատրաստվել այդ մենամարտին եւ մեծ ոգեւորությամբ էր այն անցկացնում՝ հարվածների մի ամբողջ շարք տեղալով մրցակցի վրա: Արդեն առաջին ռաունդում Մբամբան հայտնվեց նոկդաունում: Թվում էր, թե նա չի դիմանա Վախթանգի ճնշմանն ու շուտով գետնին կտապալվի: Սակայն հարավաֆրիկացին «ամուր ընկույզ» դուրս եկավ եւ կարողացավ 12 ռաունդ դիմանալ: Երեք մրցավարներն էլ միաձայն հաղթանակը շնորհեցին Վախթանգ Դարչինյանին (119-107, 120-107 120-107), ինչը մարզասերները մեծ ցնծությամբ ընդունեցին:

Ընդհանուր առմամբ Երեւանում առաջին անգամ կազմակերպված պրոֆեսիոնալ բռնցքամարտի երեկոն ստացվեց: Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի դահլիճը լեփ լեցուն էր բռնցքամարտի սիրահարներով, որոնք իրենց բացականչություններով մենամարտերի ընթացքում ոգեւորում եւ աջակցում էին հայ բռնցքամարտիկներին: Իսկ Վախթանգի մենամարտի ժամանակ յուրաքանչյուր հաջող հարվածից հետո դահլիճը պարզապես «պայթում» էր բացականչություններից ու ծափերից:

«Շատ ուրախ եմ, որ հաղթեցի: Այս հաղթանակը նվիրում եմ Հայաստանի անկախության 20-ամյակին: Այստեղ են գտնվում պրոֆեսիոնալ բռնցքամարտի հայտնի գործիչները, որոնց թույլտվությամբ IBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի գոտին նվիրում եմ Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանին: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել նաեւ մրցաշարի գլխավոր հովանավոր Գագիկ Ծառուկյանին ու նրան հանձնել 2008-ի լավագույն նոկաուտի համար ստացած մրցանակս: Շնորհակալ եմ նաեւ մյուս հովանավորներին, բոլոր նրանց, որոնց շնորհիվ հնարավոր եղավ կազմակերպել պրոֆեսիոնալ բռնցքամարտի այս հիանալի երեկոն Հայաստանում: Խոստացել էի, որ լավ մենամարտ ու շոու է լինելու, ափսոս միայն, որ չհաջողվեց նոկաուտով հաղթել:

Իմ նպատակն է պրոֆեսիոնալ բռնցքամարտում հնարավորինս շատ չեմպիոնական գոտիներ նվաճել, որպեսզի ընդգրկվեմ լավագույնների շարքը: Նաեւ ցանկանում եմ Հայաստանում պրոֆեսիոնալ բռնցքամարտի դպրոց հիմնել, օգնել հայ բռնցքամարտիկներին: Այսօր այստեղ է գտնվում Ավստրալիայի լավագույն պրոմոութերներից մեկը՝ Գերի Շոուն, որը 2-րդ անգամ է Հայաստանում: Առաջին այցելության ժամանակ նրան ընդունել էր Հանրապետության նախագահը: Կարծում եմ, որ հետագայում եւս Հայաստանում կկազմակերպվեն պրոֆեսիոնալ բռնցքամարտի մենամարտեր», մենամարտի ավարտից հետո հենց ռինգում հայտարարեց Վախթանգ Դարչինյանը:

Դարչինյան-Մբամբա մենամարտը պրոֆեսիոնալ բռնցքամարտի երեկոյի գլխավոր եւ վերջին մենամարտն էր: Իսկ մինչ այդ ռինգ դուրս եկան մեր սկսնակ պրոֆեսիոնալները: Հովհաննես Ժամկոչյան-Միխայիլ Գոգոլաշվիլի եւ Ազատ Հովհաննիսյան-Սերգեյ Տոպիլով մենամարտերն ընթացան նույն սցենարով: Երկուսում էլ 2-րդ ռաունդում հայ բռնցքամարտիկները մրցակիցներին նոկաուտի ենթարկեցին: Իսկ ահա Գաբրիել Տոլմաջյանն ու Եվգենի Ֆյոդորովը ռինգում անցկացրին նախատեսված 6 ռաունդներն էլ: Միեւնույն 60-54 հաշվով երեք մրցավարներն էլ հաղթանակը շնորհեցին հայ բռնցքամարտիկին: Այդ երեկո հայ բռնցքամարտիկներն իրոք գերազանցեցին մրցակիցներին:

## Դավիթ Գրաֆի հարվածներին առայժմ ոչ ոք չի դիմանում

**Վախթանգ Դարչինյանի մենամարտը դիտելու նպատակով կրկին Երեւան էին ժամանել առաջին ծանրքաշային պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Դավիթ Գրաֆը (Վահագն Սահակյան) եւ նրա մարզիչ ու պրոմոութեր Ժիրայր Գրաֆը (Ժիրայր Բասմաջյան): Երեկ նրանք հյուրընկալվել էին «Տեսակետ» ակումբում:**

**Ինչպես տեղեկացրել էինք, օգոստոսի 27-ին Դավիթը Գերմանիայի Էրֆուրտ քաղաքում 4-ռաունդանոց մենամարտում 1-ին ռաունդում նոկաուտի էր ենթարկել հունգարացի Վիկտոր Շալային՝ տոնելով պրոֆեսիոնալ ռինգում 4-րդ հաղթանակն անցկացրած 4 հանդիպումներում: Ուշագրավն այն է, որ բոլոր մենամարտերում էլ Դավիթը հաղթել է նոկաուտով:**

**Դավիթը նախ շնորհակալություն հայտնեց Վախթանգ Դարչինյանին, որն իրեն հրավիրել էր ներկա գտնվելու երեւանյան մենամարտին: Դավիթը շատ ուրախ էր Վախթանգի հաղթանակի առիթով ու օգտվելով առիթից, մեկ անգամ եւս շնորհավորեց չեմպիոնական գոտին պահպանելու համար: Անդրադառնալով Շալայի հետ հանդիպմանը, նա նշեց, որ մրցակիցը բավական փորձառու էր, իրենից 10 տարով մեծ, պրոֆեսիոնալ ռինգում 55 մենամարտ էր անցկացրել: Թեեւ այդ ամենին, Դավիթից ընդամենը 1 րոպե 31 վրկ պահանջվեց մրցակցին նոկաուտի ենթարկելու համար: Իհարկե, Դավիթը ռինգ դուրս գալիս բնավ էլ իր առջեւ նպատակ չի դնում անպայման նոկաուտով հաղթելու: Սակայն առայժմ դա նրան հաջողվում է:**

**Ժիրայր Գրաֆը տեղեկացրեց, որ հաջորդ մենամարտը նախատեսվում է դեկտեմբերին: Դավիթն արդեն կմրցի 6-ռաունդանոց մենամարտում: Իր սանից սպասելիքները մեծ են: Այսօր Դավիթը քաշային իր կարգում արդեն աշխարհի 200 ուժեղագույն բռնցքամարտիկների թվում է, իսկ Գերմանիայում զբաղեցնում է 7-րդ հորիզոնականը: Նա իր սանի գործողություններում առանձնապես գնահատում է ոտքերի շարժումների միջոցով պաշտպանվելն ու հարմար պահը որսալը, երբ հնարավոր է մեկ դիպուկ հարվածով վճռել մենամարտի ելքը:**

## Գերմանիան ապահովեց եզրափակիչի ուղեգիրը

**Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի հերթական հանդիպումներն անվանեցին Եվրո-2012-ի եզրափակիչ փուլի 3-րդ մասնակցին: Առաջնության կազմակերպիչներ Ուկրաինայի եւ Լեհաստանի հավաքականներից հետո բաղձալի ուղեգիր նվաճեց Գերմանիայի ընտրանին, որը 8-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ սեփական հարկի տակ 6-2 հաշվով հաղթելով ավստրիացիներին:**

**Ընտրական 2-րդ խմբում ռուսները սեփական հարկի տակ Սեմշովի խփած միակ գոլի շնորհիվ հաղթեցին մակեդոնացիներին: Իսկ Սլովակիայի հավաքականը, որի հետ այսօր հյուրընկալվելիս մրցելու է Հայաստանի ընտրանին (խաղը կսկսվի Երեւանի ժամանակով 23.15-ին), Իռլանդիայում ոչ-ոքի (0-0) խաղաց տանտերերի հետ: Այսօր իռլանդացիները հյուրընկալվելու են ռուսներին:**

**Եթե 1-ին խմբում ուղեգրերից մեկը նվաճել են գերմանացիները, ապա 2-րդ ուղեգրի համար պայքար է ընթանում թուրքերի եւ բելգիացիների միջեւ: Թուրքերը 2-1 հաշվով հաղթելով ղազախներին, վաստակեցին 13 միավոր ու շրջանցեցին բելգիացիներին, որոնք 2 միավոր կորցրին Բաքվում՝ ոչ-ոքի (1-1) խաղալով Ադրբեջանի հետ: Վերջինս պարտությունից խուսափեց խաղավարտից 4 րոպե առաջ:**

**3-րդ խմբում առաջատարը՝ Իտալիայի հավաքականը հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթելով ֆարերներին, 19 միավորով վստահորեն գլխավորում է աղյուսակը: Իտալացիներին 8 միավոր են զիջում Սլովենիայի հավաքականի ֆուտբոլիստները, որոնք սեփական հարկի տակ 1-2 հաշվով զիջեցին էստոնացիներին: Սերբերն էլ մրցակցի դարպասում Պանտելիչի խփած միակ գոլի շնորհիվ հաղթեցին հյուսիսիռլանդացիներին:**

**Ֆրանսիայի հավաքականը հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթելով ալբանացիներին, 16 միավորով ամրապնդեց 4-րդ խմբի առաջատարի դիրքը: Միեւնույն 2-0 հաշվով մրցակիցների դարպասում ռումինացիները հաղթեցին Լյուքսեմբուրգին, բոսնիացիները պարտության մատնեցին բելառուսներին:**

**Հոլանդիայի հավաքականը 11-0 հաշվով ջախջախեց Սան Մարինոյի ընտրանուն եւ 21 միավորով վստահորեն գլխավորում է 5-րդ խմբի աղյուսակը: Հունգարացիները 2-1 հաշվով հաղթելով շվեդներին, վաստակեցին 15 միավոր ու հավասարվեցին նրանց: Ֆինները էլ 4-1 հաշվով առավելության հասան մոլդովացիների նկատմամբ:**

**Ընտրական մյուս հանդիպումներում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. Իսրայել-Հունաստան՝ 0-1, Վրաստան-Լատվիա՝ 0-1, Մալթա-Խորվաթիա՝ 1-3, Բուլղարիա-Անգլիա՝ 0-3, Ուելս- Չեռնոգորիա՝ 2-1, Կիպրոս-Պորտուգալիա՝ 0-4, Նորվեգիա-Իսլանդիա՝ 1-0, Լիտվա-Լիխտենշտեյն՝ 0-0, Շոտլանդիա-Չեխիա՝ 2-2:**

**6-րդ խմբում առաջատարը 17 միավորով հույներն են: 7-րդ խումբը 14 միավորով գլխավորում է Անգլիայի ընտրանին: Մյուս երկու խմբերում 1-ին հորիզոնականը զբաղեցնում են Պորտուգալիայի (13) եւ Իսպանիայի (15) հավաքականները:**

**Մրցաշարային աղյուսակ**
**2-րդ խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Ռուսաստան | 7 | 5 | 1 | 1 | 10-4 | 16 |
| 2. Իռլանդիա | 7 | 4 | 2 | 1 | 11-6 | 14 |
| 3. Սլովակիա | 7 | 4 | 2 | 1 | 6-4 | 14 |
| 4. Հայաստան | 7 | 3 | 2 | 2 | 13-7 | 11 |
| 5. Մակեդոնիա | 7 | 1 | 1 | 5 | 5-9 | 4 |
| 6. Անդորրա | 7 | 0 | 0 | 7 | 1-16 | 0 |

### ՖՈՒՏԲՈԼ

## Դժվարին հաղթանակ

**Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը բավական մեծ դժվարությամբ Անդորրայում հաղթեց տանտերերին: Միայն խաղավարտից 5 րոպե առաջ Վալտեր Պողոսյանին հաջողվեց խփել հանդիպման միակ գոլը: Այս հաղթանակի շնորհիվ Հայաստանի երիտասարդական հավաքականը 6 միավորով գլխավորեց Եվրո-2013-ի ընտրական մրցաշարի 3-րդ խմբի աղյուսակը: Այսօր մեր ֆուտբոլիստները կհյուրընկալվեն հաջորդ փուլի ուղեգրի հիմնական հավակնորդներից մեկին՝ չեխերին (խաղի սկիզբը ժամը 20-ին): Վերջիններս առայժմ մեկ խաղ են անցկացրել՝ սեփական հարկի տակ՝ 8-0 հաշվով ջախջախելով Անդորրայի ընտրանուն:**

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Հայաստան | 2 | 2 | 0 | 0 | 5-1 | 6 |
| 2. Չեխիա | 1 | 1 | 0 | 0 | 8-0 | 3 |
| 3.Չեռնոգորիա | 2 | 1 | 0 | 1 | 6-4 | 3 |
| 4. Ուելս | 1 | 1 | 0 | 0 | 1-0 | 3 |
| 5. Անդորրա | 4 | 0 | 0 | 4 | 0-15 | 0 |

## 2-րդ շրջանն ավելի հաջող էր հայ շախմատիստների համար

**Մոսկվայում ավարտվեց շախմատի աշխարհի նախկին չեմպիոն Միխայիլ Բոտվիննիկի 100-ամյակին նվիրված մրցաշարը: Արագ շախմատի մրցաշարի 2-րդ շրջանում Արոնյանն ավելի հաջող խաղաց: Նա հաղթեց Վլադիմիր Կրամնիկին եւ Մագնուս Կառլսենին, որոնց հետ առաջին շրջանում հաշտություն էր կնքել: Իսկ ահա Վիշվանաթան Անանդին հայ շախմատիստը կրկին պարտվեց: 6 պարտիաներում Արոնյանը վաստակեց 3 միավոր ու գրավեց 3-րդ տեղը՝ լրացուցիչ գործակիցներով զիջելով նույնպիսի արդյունքի հասած Վլադիմիր Կրամնիկին: Հաղթող ճանաչվեց Վիշվանաթան Անանդը, որը մրցաշարն անցկացրեց առանց պարտության՝ վաստակելով 4,5 միավոր: 1,5 միավորով աղյուսակը եզրափակեց Մագնուս Կառլսենը, որը 2-րդ շրջանի 3 պարտիաներում էլ պարտվեց:**

**Կանանց մրցաշարում Էլինա Դանիելյանը եւս ավելի հաջող խաղաց 2-րդ շրջանում՝ հաղթանակներ տոնելով Տատյանա Կոսինցեւայի եւ Համպի Կոներուի նկատմամբ: Իսկ Վիկտորիա Չմիլիտեի հետ պարտիայում, որին առաջին շրջանում հաղթել էր, հայ շախմատիստուհին պարտվեց: Հենց այդ պարտությունն էլ ճակատագրական եղավ Էլինայի համար, որը 3,5 միավորով գրավեց 2-րդ տեղը՝ առաջին մրցանակը զիջելով Չմիլիտեին: Վերջինս վաստակեց 4 միավոր: 2,5 միավորով 3-րդ տեղը զբաղեցրեց Տատյանա Կոսինցեւան, իսկ 4-րդ հորիզոնականում 2 միավորով Համպի Կոներուն է:**

**Այնուհետեւ կայացավ կայծակնային մրցաշար, որտեղ շախմատիստները զույգերով մրցեցին միմյանց հետ: Բնականաբար, Լեւոն Արոնյանը զույգ էր կազմել Էլինա Դանիելյանի հետ: Հնդիկ շախմատիստներ Վիշվանաթան Անանդն ու Համպի Կոներուն էլ ընկերակցել էին միմյանց: Մյուս զույգերը կազմել էին ռուսաստանցիներ Վլադիմիր Կրամնիկն ու Տատյանա Կոսինցեւան, Մագնուս Կառլսենն ու Վիկտորիա Չմիլիտեն: Այդ մրցախաղերում կեն‌տ ֆայլերը կատարում էին կանայք, զույգ ֆայլերը՝ տղամարդիկ:**

**Արոնյանն ու Դանիելյանը հաղթանակով սկսեցին մրցաշարը՝ 69-րդ ֆայլին պարտության մատնելով Կառլսեն-Չմիլիտե զույգին: Մյուս խաղասախտակին Կրամնիկն ու Կոսինցեւան պարտություն կրեցին հնդիկ շախմատիստներից: Վերջիններս 2-րդ տուրում հաղթեցին նաեւ հայերին: Ընդ որում եղավ մի պահ, որ Արոնյանը կարող էր մատ հայտարարել, սակայն չնկատեց: Կրամնիկ-Կոսինցեւա զույգը ոչ-ոքի խաղաց Կառլսեն-Չմիլիտե երկյակի հետ: 3-րդ տուրում վերջինիս հաղթեց նաեւ մեր զույգը, իսկ հնդիկները պարտության մատնեցին ռուսներին:**



**Այսպիսով, յուրօրինակ կայծակնային մրցաշարի հաղթող ճանաչվեց Անանդ-Կոներու զույգը, որը վաստակեց 2,5 միավոր: 2-րդ տեղը 2 միավորով գրավեց Արոնյան-Դանիելյան երկյակը: Կառլսենն ու Չմիլիտեն մեկ միավորով 3-րդ տեղը զբաղեցրին: Բոլորից անհաջող հանդես եկան Կրամնիկն ու Կոսինցեւան՝ 0,5 միավորով եզրափակելով աղյուսակը:**

## Արման Փաշիկյանը միջին դիրքերում է

**Խանտի Մանսիյսկում ընթացող Յուգրայի նահանգապետի գավաթի խաղարկության վերջին 3 տուրերն այնքան էլ հաջող չէին Արման Փաշիկյանի համար: 3-րդ տուրում նա ոչ-ոքի խաղաց Վիտալի Շինկեւիչի հետ, ապա մրցաշարում անդրանիկ պարտությունը կրեց Պավել Կոցուրի հետ մրցավեճում: 5-րդ տուրը հաղթական էր հայ շախմատիստի համար, որը պարտության մատնեց Ելենա Սեմյոնովային:**

**5 տուրից հետո Արման Փաշիկյանը վաստակել է 3,5 միավոր: 6-րդ տուրում նա կմրցի Անդրեյ Օբոդչուկի հետ: Աղյուսակը 4,5-ական միավորով գլխավորում են Դմիտրի Բոչարովը, Մաքսիմ Մատլակովը, Դենիս Խիսամուտդինովն ու Ղադիր Հուսեյնովը: Ռուսաստանցի Օլեգ Պապայանն ունի 3 միավոր:**

## Նալբանդյանը դուրս մնաց պայքարից

**Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնության 3-րդ շրջանում Դավիթ Նալբանդյանը մրցեց իսպանացի Ռաֆայել Նադալի հետ: Նախորդ փուլում Դավիթը պայքարից դուրս էր մղել Իվան Լյուբիչիչին (6-4, 1-6, 6-3, 6-2): Իսկ ահա Նադալի դիմադրությունը հաղթահարել չհաջողվեց: Նալբանդյանը պարտվեց (6-7, 1-6, 5-7) ու դուրս մնաց հետագա պայքարից:**

**Հերթական հաղթանակը տոնեց Ռոջեր Ֆեդերերը՝ առավելության հասնելով Մարին Չիլիչի նկատմամբ (6-3, 4-6, 6-4, 6-2): Պայքարը շարունակում են նաեւ Նովակ Ջոկովիչը, Ալեքսանդր Դոլգոպոլովը, Յանկո Տիպսարեւիչը, Խուան Կառլոս Ֆեռերոն, Խուան Մոնակոն, Ժո-Ուիլֆրիդ Տսոնգան, Մարդի Ֆիշը, Ջոն Իսները, Ժիլ Սիմոնը, Դոնալդ Յանգը, Էնդի Մերեյը, Դավիթ Ֆեռերը, Էնդի Ռոդիկը եւ Ժիլ Մյուլլերը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## ԹԲԻԼԻՍԻ

### Ասում ենք, որ չեն թռչում, էլի...

Վրաստանում ոչ միայն խստագույնս բարեկամ են ամերիկյան արժեքներին ու պետությանը, այլեւ հերքում են նույն այդ երկրի դիվանագիտական ներկայացուցիչների հաղորդագրությունները, որոնց «WikiLeaks»-յան հրապարակումները թեեւ մեծագույն գաղտնիքներ չեն պարունակում, բայց եւ այնպիսի տեղեկություններ չեն ներկայացնում, որոնց հերքումը նշանակություն կարող է ունենալ:

Մյուս կողմից, «WikiLeaks»-յան հրապարակումները բնավ էլ մաքուր իրողություն կամ բարձրագույն ճշմարտություն չեն եւ հաճախ մնում են զուտ ամերիկյան տեսակետ ու դիրքորոշում ներկայացնող փաստաթղթերի մի հավաքածու:

Վրաստանի արտգործնախարարությունը հերքել է «WikiLeaks»-ի հրապարակումներից մեկը, թե իբր Վրաստանը շարունակում է իր օդային տարածքը տրամադրել Հայաստանի համար ռազմական բեռների տեղափոխմանը: Այս տեղեկությունը տարածվել է համաձայն Վրաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Բասի հաղորդագրության, որ թվագրված է 2010-ի փետրվարով, թե վրացական օդային տարածքը դեռ օգտագործվում է Հայաստան ռազմական բեռներ տեղափոխելու նպատակով:

Վրացական լրատվամիջոցների փոխանցմամբ՝ երեկ վրաց փոխարտգործնախարար Նինո Քալանդաձեն հայտարարել է, որ թեեւ Վրաստանը Ռուսաստանի հետ օդային տարածքի օգտագործման համաձայնագիր ուներ, սակայն այդ փաստաթուղթը անվավեր է ճանաչվել վրաց խորհրդարանում: Ընդ որում, ըստ Քալանդաձեի, ռուսաստանյան կողմը քանիցս դիմել է Վրաստանին օդային տարածքը բացելու համար, բայց վերջին անգամ դա եղել է 2008-ին, իսկ վրացական կողմը չի համաձայնել:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

### Այ քեզ հարեւաններ...

Թուրքական «Ռադիկալ» (Radikal) թերթը, ըստ «Պանորամայի», տեղեկացնում է, որ Թուրքիայի առողջապահության նախարարությունը հրապարակել է երկրի բնակչության հոգեբանական քարտեզը, ըստ որի Թուրքիայում ամեն 5-րդ քաղաքացին հոգեկան խնդիրներ ունի:

Ներկայացվում են նախարարության հրապարակած ուշագրավ տվյալներից մի քանիսը: Ըստ այդմ՝ Թուրքիայում բնակչության 18 տոկոսը կյանքի ընթացքում հոգեկան որեւէ հիվանդությամբ է տառապում: Երեխաների եւ պատանիների 11 տոկոսի մեջ կան առողջական խնդիրներ, իսկ հոգեկան հիվանդությամբ տառապող 6 անձից միայն մեկն է բժշկական օգնություն ստանում:

Սրտանոթային հիվանդություններից հետո Թուրքիայում 2-րդ տեղում հոգեկան հիվանդություններն են, եւ, ի տարբերություն եվրոպական երկրների, որտեղ շիզոֆրենիայով տառապող հիվանդների 50 տոկոսն է ընտանիքների հետ ապրում, Թուրքիայում այդ հիվանդների 95 տոկոսն է ընտանիքների հետ ապրում:

**Ա. Հ.**

**Վաճառվում է**
**Volkswagen Jetta**

**մակնիշի ավտոմեքենա, արծաթափայլ, արտ. 2000 թ., վաճ. 2001 թ., շարժիչը 2 լ., փոխանց. տուփը ավտոմատ, սրահը կաշվեպատ, դիմացի նստատեղերը տաքացվող, հայելիները, լյուկը եւ ապակիները (մուգ) էլեկտր., ունի կոնդիցիոներ: Գերազանց վիճակ: 095 02 66 19:**

## Հանձնաժողովը խղճաց «ՀԷՑ»-ին

*Չտուգանելով նրան գերիշխող դիրքի չարաշահման համար*

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը երեկ արձանագրեց, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ընկերությունը թույլ է տվել գերիշխող դիրքի չարաշահում: Ընկերությունը չի կատարել իր պարտավորությունները, որի հետեւանքով Երեւանի Նոր Նորք համայնքի Մոլդովական եւ Բագրեւանդ փողոցների միջանկյալ տարածքում գտնվող մոտ 20 նորակառույց բնակելի տների սեփականատերեր կրել են կենցաղային անհարմարություններ եւ ֆինանսական կորուստներ:

Հանձնաժողովի ուսումնասիրություններով պարզվել է, որ «ՀԷՑ»-ը գործել է օրենսդրական խախտումներով, բնակիչները զրկվել են պատշաճ էլեկտրամատակարարում ունենալու հնարավորությունից: Միայն հանձնաժողովի կողմից վարույթն սկսելուց հետո «ՀԷՑ»-ը սկսել է աշխատանք իրականացնել խախտումը վերացնելու ուղղությամբ: Նկատի ունենալով, որ բնակիչների պահանջն այդ ընթացքում արդեն բավարարվել է եւ ընկերության նկատմամբ առաջին անգամ է վարչական վարույթ հարուցվում, հանձնաժողովը որոշեց չտուգանել «ՀԷՑ»-ին 20 միլիոն դրամ, այլ միայն տալ «խիստ նախազգուշացում՝ միաժամանակ հանձնարարելով հետագայում բացառել նման խախտումները»:

**Ա. Ս.**

## ՀԱՄԱՌՈՏ

### Կռունկի սլաքը պոկվել է եւ 2 զոհ պատճառել

Շաբաթ երեկոյան Նոր Նորքի Գյուրջյան 60 հասցեում շինարարական աշխատանքներ իրականացնելու ժամանակ՝ պոկվել եւ վայր է ընկել անվավոր կռունկի սլաքը եւ երկու զոհի պատճառ է դարձել: KC-5363B մակնիշի անվավոր կռունկի սլաքը ընկել է Երեւան քաղաքի Շոպրոնի 1-ին նրբանցքի 23 շենքի բնակիչ 1973 թ. ծնված Արայիկ Գասպարյանի եւ Դավթաշեն 3-րդ թաղամասի 7-րդ շենքի 28 բն. բնակիչ 1980 թ. ծնված Սամվել Եփրեմյանի ուղղությամբ՝ պատճառելով մահացու մարմնական վնասվածքներ: Հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին մահացել է Արայիկ Գասպարյանը, իսկ հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում՝ Սամվել Եփրեմյանը: Նախաքննությունը կպարզի՝ արդյո՞ք քամին է եղել վթարի պատճառը, թե՞ անսարքությունը:

**Ս. ՄԱԿԱՐՅԱՆ**

### Կրկնակի արագ անսահմանափակ ինտերնետ՝ նույն ամսավճարի դիմաց

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, ընկերությունն այսուհետեւ միեւնույն՝ 3500 դրամ ամսավճարի դիմաց, նախկին 128 կբիթ/վրկ-ի փոխարեն տրամադրում է կրկնակի արագ՝ 256 կբիթ/վրկ արագությամբ անսահմանափակ ինտերնետ: Բաժանորդագրվելով «ՄՏՍ կոնեկտ 256» սակագնային պլանին մեկ տարով, «ՄՏՍ կոնեկտ» USB մոդեմը տրվում է անվճար:

## Նոր հրատարակություն. Սբ Ներսես Շնորհալու նամականի




Գարեգին Բ եւ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել «Հոգեւոր ընթերցումներ» շարքի 15-րդ հատորը՝ Սուրբ Ներսես Շնորհալու «ԺԲ դար, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններ» նամականին, որը գրաբարից աշխարհաբար է թարգմանել Սեդա Ստամբոլցյանը:

Միջնադարյան այս նամականին բաղկացած է երկու մասից եւ ներկայացնում է ԺԲ դարի այն ժամանակաշրջանը, որում գործել են հայոց կաթողիկոսներ Գրիգորիս Գ-ն, Ներսես Շնորհալին եւ Գրիգորիս Դ-ն: Առաջին մասը, որի կազմողն ու նամակները նախաբանով ու ծանոթագրական պատմություններով ուղեկցողը Ներսես Լամբրոնացին է, բովանդակում է հայ եւ բյուզանդական եկեղեցիների միջեւ 1165-1178 թթ. շրջանում ձեռնարկված միության փորձին առնչվող վավերագրեր, իսկ երկրորդ մասը ներկայացնում է բացառապես սբ Ներսես Շնորհալու նամակները՝ գրված տարբեր անձանց ու այլեւայլ առիթներով:

Գիրքը տպագրվել է Մայր աթոռի բարերար Սարգիս Պետոյանի մեկենասությամբ:

## Ցավակցություն

Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը խորապես ցավակցում է Հայ եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Ջուլջյանին՝ իր սիրելի մոր՝ **Վարդանուշ Ջուլջյանի** մահվան կապակցությամբ:

* * *

«Ազգի» խմբագրությունը միանում է ցավակցությանը:

**ՔԱՆԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ ՏԻՐԱՊԵՏԵԼ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻՆ**

ՀԺՄ պատանի ժուռնալիստի դպրոցը (որը գործում է 1973 թվականից) Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ համատեղ հրավիրում է սովորելու հանրակրթական դպրոցների ժուռնալիստական հակում ունեցող բարձր դասարանցիների եւ վերջին տարիների շրջանավարտների:

Դասերը վարում են հանրապետության լավագույն մասնագետները, Պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոսները:

Ուսման տեւողությունը՝ մեկ տարի:

Պարապմունքները կսկսվեն հոկտեմբերի 4-ից՝ յուրաքանչյուր երեքշաբթի, ժամը 15.00-ին, ժուռնալիստի տանը՝ Պուշկինի 3ա հասցեում, հունվարից՝ Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում:

Ուսուցումն անվճար է:

Ավարտողները կստանան վկայագիր:

Դիմել կարող են ամեն օր, ժամը 12.00-16.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, մինչեւ սեպտեմբերի 30-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 56-12-76, 56-14-47 հեռախոսահամարներով:

**ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Արմավիրի մարզի բնակիչ Վահան Ազատյանը ձկնաբուծության նպատակով ներկայացնում է ստորերկրյա ջրային ռեսուրսից 157 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. սեպտեմբերի 13-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

**ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Արարատի մարզի բնակիչ Գագիկ Սարգսյանը ձկնաբուծության նպատակով ներկայացնում է ստորերկրյա ջրային ռեսուրսից 102 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. սեպտեմբերի 13-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

**ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Արմավիրի մարզի բնակիչ Մարինե Նազարյանը ձկնաբուծության նպատակով ներկայացնում է ստորերկրյա ջրային ռեսուրսից 157 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. սեպտեմբերի 13-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

**ՀՀ ԱՄՆ դեսպանատունը մրցույթի է հրավիրում**

Ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերություններին:
Մրցութային փաթեթները կարող են ձեռք բերել Ամերիկյան 1 հասցեում,
ԱՄՆ դեսպանատան կենտրոնական մուտքից,
օգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 8-ը, ժամը 9:00 – 18:00-ն:

**Վաճառվում է**
**Daewoo Matiz Best**
մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 3 600 կմ,
արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները
եւ ապակիները
էլեկտր., գերազանց վիճակ է:
**Հեռ.՝ (094) 577-578**




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝5.9.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: